Ազգ
Azg
2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 179 (4559)
ISSN: 1829-1651

# Ո՞ւմ պիտի նոտա ուղարկի Ադրբեջանը, թե Արցախը գոյություն ունի

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը դեռեւս սեպտեմբերի 24-ին ԱԳՆ է հրավիրել Ադրբեջանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Ադամ Ստերլինգին՝ հանձնելու իր բողոքի նոտան: «Թրենդ» գործակալության տեղեկացմամբ, Ադրբեջանը ԱՄՆ-ին նոտա է հղել այն կապակցությամբ, որ Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի խոսնակ Աշոտ Ղուլյանը Միացյալ Նահանգներում հանդիպել է ԱՄՆ կոնգրեսական Հովարդ Բերմանի հետ:

Նույն ադրբեջանական աղբյուրների համաձայն, ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպանատանը պետքարտուղարությունից հավաստիացրել են, թե Ղուլյանը Միացյալ Նահանգներում է գտնվել որպես մասնավոր անձ, որպես Հայաստանի քաղաքացի ու պաշտոնական հանդիպումներ չի ունեցել:

Չնայած ԱՄՆ պաշտոնական նման արձագանքին, Ադրբեջանը պետք է ընդունի, որ Լեռնային Ղարաբաղն իր անկախ եւ ինքնուրույն քաղաքականությամբ ու առկայությամբ գոյություն ունի, եւ այդ առնչությամբ Ադրբեջանը հաստատապես ոչ մեկին նոտա հղել չի կարող:

Ա. Հ.

# «Անին եվրոպական բնորոշման սկիզբն ու վերջն է»

## *Տաճարում նամազ անելը ապտակ է եվրոպական քաղաքակրթությանն ու վիրավորանք իսլամին*

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տանտիրոջ հետքը Թուրքիայում ամեն օր պակասում է: 1912-ին Արեւմտյան Հայաստանում հաշվառված ավելի քան 2000 եկեղեցիներից այսօր միայն փշրանքներ են մնացել: Թուրքական գործելակերպը՝ ոչնչացնել հայկական եկեղեցիներն ու մշակութային կոթողները, սահմանափակվում է միայն պատմական հայրենիքում: Կեսարիայում կամ Ստամբուլում եղած հայկական եկեղեցիներին որեւէ վտանգ չի սպառնում: Հուշարձանագետ **Սամվել Կարապետյանի** ներկայացմամբ՝ այդ կերպ թուրքերը ցանկանում են ազատվել հայկականությունից եւ փոխել պատմությունը: «Մեր տան մեջ հայի բնօրրանի հետքն են ոչնչացնում: Մենք վտանգավոր ենք մեր տան մեջ: 60.000 հայը Ստամբուլում այնքան վտագավոր չէ, որքան Վանում ապրող մեկ հայը»: Կարապետյանի փոխանցմամբ՝ բազմաթիվ հուշարձաններ թուրքերը վերածել են հասարակական զուգարանի, անասնագոմի կամ պահեստի: Բացառություն չէ նաեւ Անիի մայր տաճարը:



«Ազգայնական շարժում» ընդդիմադիր կուսակցության նախագահ **Դեւլեթ Բահչելիի** երեկ Անիի տաճարում նամազ անելու արարողությունը հուշարձանագետը որակում է «առաջընթաց»: «Թուրքերն ահագին առաջադիմել են. եկեղեցին է՛լ հասարակական զուգարան չեն դիտարկում: Հասկացան, որ տաճարում պետք է աղոթել: Նրանց պետք է ծափահարել, որ այսքան առաջադիմել են: Միշտ պետք է համեմատության մեջ գնահատենք երեւույթները, եւ այդ կտրվածքով պետք է շնորհավորել թուրքերին: Լավ է, որ նրանց բարբարոս ձեռքը չի քանդում եկեղեցին»:

*Տես էջ 3*



# Ադամ Շիֆը նոր փաստեր է ավելացնում կոնգրեսական տարեգրություններին

Սեպտեմբերի 29-ին ԱՄՆ-ի կոնգրեսական **Ադամ Շիֆը** կոնգրեսական տարեգրությունների «Հայերի դեմ գործված ցեղասպանություն» բաժնի պատասխանատուներին է հանձնել Արամ Դեմիրճյանի՝ Եղեռնից մազապուրծ հոր պատմությունը՝ որպես հավելյալ վկայություն այդ օրերի դաժան իրադարձությունների: «Այս լրացումը կնպաստի այդ մասին իրազեկության ամբողջականացմանը եւ կոնգրեսականներին ու առհասարակ ամերիկացիներին կմղի վերջապես ճանաչելու կատարված ցեղասպանությունը», ասել է նա այդ առիթով:

Խմբագրությանը հասցեագրված այս հաղորդագրության մեջ կոչ է արվում ցեղասպանության հետ կապված հայ ընտանիքների պատմությունները ուղարկել Շիֆի Փասադենայի գրասենյակի պատասխանատու Մարի Հովակիմյանին հետեւյալ հասցեով՝ mary.hovagimian@mail.house.gov: Հիշեցնենք, որ ընդամենը մի քանի շաբաթ առաջ Ադամ Շիֆի նախաձեռնությամբ Կոնգրեսում դիտել էին գերմանացի ռեժիսոր Էրիկ Ֆրիդլերի 90-րոպեանոց «Աղետ» ֆիլմը:

Հ. Ծ.

# Եռօրյա սեմինար «Ցեղասպանություն եւ հիշողություն» թեմայով

Հոկտեմբերի 1-3-ը «Ցեղասպանություն եւ հիշողություն. շփում պատմության հետ» վերնագրով սեմինար է կազմակերպվել Քյոլնում: Հիշյալ թեմայով դասախոսությունների եւ բանավեճի ձեւաչափն են ընտրել Ֆրանկֆուրտից, Համբուրգից, Բեռլինից եւ Քյոլնից նախագծի կազմակերպիչները: Եռօրյա սեմինարին կլսվեն Այքե Շտեգենի, Րաֆֆի Քանդյանի, Միհրան Դաբաղի դասախոսությունները: Ցեղասպանության հիշողությունը արամեացիների եւ սեւծովյան հույների մտապատկերում թեմայով ելույթ կունենան Իբրահիմ Սեւենը եւ Դիմիտրիոս Կոնստանտինիդիսը:

Սեմինարի շրջանակներում կցուցադրվի Սերժ Ավետիքյանի՝ Կաննի 2010-ի փառատոնում «Ոսկե արմավենի» շահած «Շները» անիմացիոն ֆիլմը:

Ան. Հ.
Գերմանիա

# Թուրքերը խաչը տեղադրեցին՝ փորձելով մեղմել Անիի Մայր տաճարի նամազի ազդեցությունը

Նախօրեին թուրքական իշխանությունները Վանի Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու գմբեթին խաչ են տեղադրել: Երեկ կղզին ողջ օրվա ընթացքում փակ է եղել: Այսօր Վանի նահանգապետի եւ հայոց պատրիարքի տեղապահ Արամ արք. Աթեշյանի մասնակցությամբ նախատեսվում է իրականացնել եկեղեցու բացումը խաչի տեղադրման առթիվ: Թուրքական «Դունյա բյուլտենի» կայքէջի փոխանցմամբ՝ խաչը կշռում է 70 կգ, ունի 2.5 մետր բարձրություն, 130 սմ լայնություն: Մեկնաբանելով Թուրքիայի իշխանությունների այս քայլը, թուրքագետ **Ռուբեն Մելքոնյանն** ասաց, որ դրանով թուրքերը փորձում են հավասարակշռել Անիի Մայր տաճարում նամազ անցկացնելու թուրք ազգայնականների որոշումը:



Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանի** բնութագրմամբ՝ երկու շաբաթվա ընթացքում Թուրքիայում յուրացրին նորագույն տեխնոլոգիաներն ու տեղադրեցին ծանր խաչը, որի տեղադրումը մինչ այդ թուրքական իշխանություններն անհնար էին համարում տեխնիկական պատճառներով:

«Իրականում խաչը պետք է տեղադրվեր առանց հայերի ներկայության: Սա շատ կարեւոր էր: Խաչի տեղադրումն արարողության ժամանակ կամ արարողությունից առաջ խիստ հուզական եւ կարեւոր խորհրդանշական իմաստ պետք է ունենար, եւ սա չէր կարող հաշվի չառնել թուրքական կողմը: Նրանց համար շատ կարեւոր էր, որ այդ գործողությունը կրեր զուտ մեխանիկական բնույթ», ասաց Դեմոյանը:

Հ. Հ.

# «Ժառանգություն»-Արմենական-ՌԱԿ հանդիպում

**Միջկուսակցական հանդիպում-խորհրդակցությունների ծիրում երեկ «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչներ Ռուբեն Հակոբյանը եւ Հրաչ Մկրտչյանը կուսակցության նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանի գլխավորությամբ ընդունեցին Արմենական-ՌԱԿ վարչության դիվանի անդամներից Գայանե Մուրադյանին, Սիրո Գեւորգյանին եւ Սուրեն Սարգսյանին ատենապետ Հակոբ Ավետիքյանի գլխավորությամբ: Հայաստանում կուսակցական շինարարության, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի եւ ճանաչման գործընթացի շուրջը, ինչպես նաեւ ներհայկական քաղաքականության եւ քաղաքական ուժերի հարաբերակցության մասին զույգ կուսակցությունների ներկայացուցիչները ներկայացրին իրենց տեսակետները եւ խոստացան խորհրդակցական հանդիպումները հետագայում շարունակել հայության հուզող վերոնշյալ եւ այլ հարցերի շուրջը:**

# Վրաստանին համարյա ընդունեցին ՆԱՏՕ

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը հայտարարել է, որ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցը չի հանվել օրակարգից: «Իմ այցելությունը հաստատում է, որ Վրաստանն անպայման կդառնա ՆԱՏՕ-ի անդամ», Թբիլիսիում գտնվող ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի այս խոսքերը տարածել են բոլոր վրացական լրատվամիջոցները:

Երեկ առաջին պաշտոնական այցելությամբ Թբիլիսիում գտնվող Ռասմուսենը հանդիպել է Վրաստանի առաջին դեմքերի հետ, երկար քննարկումներ է ունեցել: Նախկինում, որպես Դանիայի վարչապետ, Ռասմուսենը Վրաստան էր այցելել դեռեւս 2008-ին: Վրաստանի ղեկավարության հետ հանդիպումներում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը քննարկել է երկրում տիրող քաղաքական իրավիճակը, 2008թ.-ի պատերազմից հետո ստեղծված վիճակին, ինչպես նաեւ Վրաստան-ՆԱՏՕ համագործակցությանն առնչվող հարցեր:

Երեկ Վրաստանում Ռասմուսենի մասնակցությամբ բացվել է նաեւ ՆԱՏՕ-ի դաշնային գրասենյակը՝ որպես պաշտոնական ներկայացուցչություն, որը կղեկավարի Զբագնեւ Ռիբացկին, որ մինչ այս զբաղեցնում էր Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի ներկայացուցչի պաշտոնը:

Ա. Հ.

# Եվրոպայի խորհրդի «Հանուն ժողովրդավարության» ֆորումը Երեւանում

Հոկտեմբերի 19-21-ը Երեւանում տեղի կունենա Եվրոպայի խորհրդի «Հանուն ժողովրդավարության» ֆորումը, որի ուշադրության կենտրոնում կլինեն Եվրոպայում ժողովրդավարության սկզբունքներն ու մարտահրավերները:

Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեղեկացմամբ, եվրոպական ժողովրդավարությունները ներկայումս շատ մարտահրավերների առաջ են կանգնած. քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահության ճգնաժամ, քաղաքականության նկատմամբ անտարբերության աճ եւ տնտեսական ճգնաժամի ազդեցություն: Սրանք գործոններ են, որոնք սպառնում են վտանգել ժողովրդավարության պատշաճ գործելը:

Քննարկումները կհամախմբեն միջազգային եւ տեղական քաղաքական դեմքերի, քաղաքացիական հասարակության, լրատվական եւ գիտական ոլորտի ներկայացուցիչների ողջ Եվրոպայից:

Ժողովրդավարական կառավարման խթանման ոլորտում ակտիվ գործող շուրջ վաթսուն ոչ կառավարական կազմակերպություններ, այդ թվում տասնվեց ՀԿ Հայաստանից, մասնակցություն կունենան ֆորումին Եվրոպայի խորհրդի Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովի (ՄՈԿԿՀ) հրավերով:

2005 թ. Վարշավայում մեկնարկած ֆորումն այնուհետեւ կազմակերպվել է Մոսկվայում (2006 թ.), Ստոկհոլմում (2007 թ.), Մադրիդում (2008 թ.) եւ Կիեւում (2009 թ.) անդրադառնալով քաղաքացիական մասնակցությանը, քաղաքական կուսակցությունների դերին, մարդու իրավունքների եւ ժողովրդավարության փոխկախվածությանը, էլեկտրոնային ժողովրդավարությանը եւ ընտրական համակարգերին:

Ա. Հ.

# Գրադարանների փակումը պետք է արգելել օրենքի ուժով

«Օրինաց երկիր» կուսակցությունը երեկ կուսակցության գրասենյակում կազմակերպել էր քննարկում հայաստանյան գրադարանների վերաբերյալ: «Մենք բազմիցս ահազանգել ենք, որ Հայաստանում վերջին 15 տարիների ընթացքում փակվել են շուրջ 300 գրադարաններ: Միայն վերջին 5 տարիների ընթացքում փակվել է շուրջ 72 գրադարան», ասաց ՕԵԿ-ի նախագահի **Արթուր Բաղդասարյանը**: Նրա խոսքով՝ գրադարանները փակվում են ինչպես Երեւանում, այնպես էլ մարզերում: «Այսօր այդ ոլորտն օրենքով կանոնակարգելու անհրաժեշտություն կա», հավելեց Արթուր Բաղդասարյանը: Հենց այդ նպատակով «Օրինաց երկիր» խմբակցությունն Ազգային ժողովում օրենսդրական նախագիծ է ներկայացրել: «Ինչպես արվել է կրթական հաստատությունների դեպքում, նախ օրենքի ուժով պետք է արգելել գրադարանների փակումը, վաճառքը կամ տարբեր մանիպուլյացիաների կիրառմամբ նրանց պրոֆիլային փոփոխությունները, որպեսզի դրանք հետագայում չդառնան խորտկարաններ ու ռեստորաններ», ասաց ՕԵԿ նախագահը: Գրադարանների հանդեպ ներկայիս քաղաքականության շարունակման դեպքում, ըստ Արթուր Բաղդասարյանի, մենք կունենանք ոչ թե 100 հազար գրքի կորուստ, այլ շատ ավելի մեծ չափերով կնվազի գրքային ֆոնդը: «Մենք ուզում ենք, որ այս տարվա ընթացքում օրենքն ընդունվի եւ համապատասխան քաղաքական պայմանավորվածություններ կան», ավելացրեց Արթուր Բաղդասարյանը:

Քննարկմանը ներկա էին նաեւ տարբեր գրադարանների տնօրեններ: Ազգային գրադարանի տնօրեն **Դավիթ Սարգսյանը** նշեց, որ գրադարանները այսօր իսկապես պատսպարության խնդիր ունեն: «Մտնում ենք խանութ՝ հիանում ենք, մտնում ենք գրադարան՝ տեսնում ենք առաստաղից ջուր է կաթում», ասաց Հայկական գրադարանային ասոցիացիայի փոխնախագահ **Ռաֆիկ Ղազարյանը**, ապա հավելեց, որ բացի շենքային պայմաններից՝ գրադարանները նաեւ ֆոնդերի համալրման խնդիր ունեն:

Մշակույթի նախարարի տեղակալ **Արթուր Պողոսյանը** տեղեկացրեց, որ վերջին 2-3 տարիների ընթացքում կառավարությունն աշխատանքներ է իրականացնում՝ ուղղված գրադարանների շենքային պայմանների բարելավմանն ու գրադարանների արդիականացմանը: Հայաստանում կան 2536 գրադարաններ: Պետական գրադարանները 13-ն են, որոնցից 3-ը Երեւանում են, իսկ 10՝ մարզերում: «Կառավարությունն ու մշակույթի նախարարությունը մտահոգ են, որ 1996-ից ընդհանուր գրադարանների թիվը կրճատվել է», ասաց Արթուր Պողոսյանը: 1996 թվականին գրադարանների թիվը կազմել է 1245, իսկ 2008 թվականին՝ 1021 գրադարան: Արթուր Պողոսյանը տեղեկացրեց, որ «Գրադարան» պետական կառավարման ծրագրով վերջին տարիներին վերանորոգվել են 3 մարզային գրադարաններ: Նախատեսված է վերանորոգել նաեւ մարզային մյուս գրադարանները, խոսքը պետական գրադարանների մասին է: «Կարելի է ասել, որ 2011 թվականին մարզային պետական գրադարանները վերանորոգված կլինեն», նշեց Ա. Պողոսյանը:

Քննարկմանը մասնակցում էր նաեւ ֆինանսների փոխնախարար **Վարդան Արամյանը**: Նա անդրադարձավ աշխատավարձերի խնդրին: Նորություն չէ, որ գրադարանների աշխատակիցների աշխատավարձը ցածր է: «Աշխատավարձի ֆոնդի մասով ցուցանիշները եւս ցածր են: Աշխատավարձերը հետագայում բարձրացնելու խնդիր իհարկե կա», ասաց Վարդան Արամյանը:

«Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար **Հեղինե Բիշարյանն** անդրադարձավ օրենքի նախագծի պատմությանը: «2005 թվականից մեր խմբակցությունը հետեւողականություն է ցուցաբերում, որ օրենքի նախագիծն օրենք դառնա: Այսօր արդեն տեսացվում է այնպես, որ մեր խմբակցության ու կառավարության շրջանառության մեջ դրված նախագծերի միավորումների արդյունքում մենք կստանանք լիարժեք մի նախագիծ, որը երեւի թե կգոհացնի ոլորտի բոլոր գրադարաններին», ասաց Հեղինե Բիշարյանը:

Քննարկման մասնակիցները, մասնավորապես գրադարանների տնօրենները, հանդես եկան նախագծի հետ կապված առաջարկություններով, դիտարկումներով, նաեւ դժգոհություններով:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ



# Հայաստան է ներկրվել բարձրորակ ցորենի սերմացու




**Վարչապետ Տիգրան Սարգսյանը Մասիս քաղաքում երեկ ներկա է գտնվել Ռուսաստանից Հայաստան ներմուծված բարձրորակ «էլիտա» ցորենի սերմնացու տեղափոխած վագոնների բեռնաթափմանը: Պատասխանելով լրագրողների հարցերին՝ նա նշել է, որ ներկրված սերմնացուն կօգնի հետագա տարիներին մեծացնելու ցորենի եւ սերմնացուի արտադրողականությունը՝ դրանով իսկ ամրապնդելով Հայաստանի պարենային անվտանգությունն ու հացահատիկի արտադրության ինքնաբավությունը: Նախատեսվում է, որ մինչեւ 2014 թ. Հայաստանը կկարողանա էապես ավելացնել ցորենի արտադրությունը՝ նվազեցնելով ներկրման չափն ու կախվածությունը միջազգային գներից:** Ա. Մ.

# Սփյուռքի նախարարության պատվիրակությունը մեկնել է Ռուսաստան

**Երեկ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը եւ նախարարի տեղակալ Ստեփան Պետրոսյանն աշխատանքային այցով մեկնեցին Ռուսաստանի Դաշնություն: Հոկտեմբերի 1-2-ին Կրասնոյարսկ քաղաքում տեղի է ունենալու Սիբիրի եւ Հեռավոր Արեւելքի դաշնային շրջանների հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիպումը: Այս հանդիպման նպատակն է նշված հայ համայնքներին ներկայացնել Սփյուռքի նկատմամբ Հայաստանի որդեգրած քաղաքականության հիմնական սկզբունքներն ու սփյուռքի նախարարության ռազմավարական ծրագրերը: Հանդիպման ընթացքում քննարկվելու են ՌԴ-ի հայ համայնքներում ինքնության պահպանման, միջհամայնքային համագործակցության զարգացման վերբերյալ հարցերը: Սփյուռքի նախարարության մշակած «Հայրենադարձության հայեցակարգի» եւ «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծերի վերաբերյալ ՌԴ-ի հայ համայնքները ներկայացնելու են իրենց տեսակետներն ու մոտեցումները: Սփյուռքի նախարարության պատվիրակությունը նաեւ մասնակցելու է Կրասնոյարսկի «Արմենիա» պարային համույթի 10-ամյակին նվիրված հոբելյանական համերգին:**

Ի. Պ.

# Մոռացությունից փրկելով անհայս հերոսներին

*«Գանձակ. 1880-1916 թթ.» գրքի շնորհանդեսը*



**Պատմական Ուտիք նահանգում, Կուրի Գանձակ վտակի ափերին գտնվող Գանձակ (Գյանջա) քաղաքը պատմամշակութային խոշոր կենտրոն է եղել, որը հիմնադրվել է 840-ական թվերին՝ ըստ «Աղվանից աշխարհի պատմություն» աշխատության: IX դ վերջից մինչեւ XII դ այնտեղ հաստատվել է Աղվանից կաթողիկոսության աթոռը: Արաբական, սելջուկյան, հետագայում նաեւ պարսկական, ադրբեջանական տիրապետությունների տակ հայտնված հայկական այս քաղաքը կարեւոր նշանակություն է ունեցել տարածաշրջանի ընդհանուր պատմության համար: Նրա բնակչության զգալի մասի՝ հայերի ճակատագրի համար մարտնչել են հասարակ ժողովրդի ծոցից ծնված հայորդիներ, որոնց մեծ մասի անունները զանազան արգելքների եւ պատմական անարդարությունների հետեւանքով ցարդ մնացել են անհայտ հայերիս համար: Այդ դաշնակցական եւ սոցիալ-դեմոկրատ բազում հերոսների, որոնց մի մասը՝ մոտ 300-ը, եղել են նաեւ զորավար Անդրանիկի զինակիցները, կենսագրությունները հետազոտել եւ արխիվային նյութերի ուսումնասիրությամբ հարստացրած մի գրքույկի մեջ ամփոփել է բնիկ գանձակեցի, 1955 թվին ծնված ազգագրագետ Սերգեյ Արամի Երեմյանցը, ում թվով երրորդ՝ «Գանձակ. 1880-1916 թթ.» վերնագրով ռուսերեն գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ սեպտեմբերի 28-ին Ազգային գրադարանի դահլիճում: Ելույթ ունեցողները բարձր գնահատեցին հեղինակի նվիրվածությունն իր գործին, հայրենասիրությունը եւ հատկապես այն հանգամանքը, որ հեղինակը ինքնուրույն ջանքերով է հավաքել անհրաժեշտ բոլոր տվյալները, հարցազրույցներ ունենալով հարյուրավոր մարդկանց հետ եւ ուսումնասիրելով մոտ 1800 գերեզմանաքարեր: Ըստ հեղինակի մոր՝ տիկին Զուլիետա Երեմյանի հավաստիացումների, նա 15 տարեկանից է սկսել հետաքրքրություն ցուցաբերել իր հայրենիքի պատմության հանդեպ:**

**Սերգեյ Երեմյանը ավարտել է Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը, 1976-1983 թվերին որպես մանկավարժ աշխատել է Ադրբեջանի եւ Հայաստանի դպրոցներում, աշխատակցում է «Գարդմանի կանչ» պարբերականին: Հեղինակ է արդեն երեք գրքերի: Վերոնշյալին նախորդել են «Գանձակ. 1905-1907 եւ 1917-1921 թթ.» եւ «Գանձակ. Հայկական գերեզմաններն ու եկեղեցիները» ռուսերեն գրքերը: Ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես ղարաբաղյան շարժման, այնպես էլ Գարդմանի հայրենակցական միության գործունեություններին:**

**Նրա հարատեւական, տքնաջան աշխատանքների արդյունքը հանդիսացող երեք գրքերը նշանակալի ներդրում են տարածաշրջանի պատմամշակութային հետազոտությունների բնագավառում: Ցանկալի կլիներ, որ դրանք մեկ գրքով թեկուզ, բայց հայերեն ներկայացվեին հայ երիտասարդությանը:**

**Բեղմնավոր գրիչ եւ հետագա հաջողություններ հայրենասեր հեղինակին:**

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Անձրեւը չխանգարեց բողոք-նամակը հանձնելուն

Երեկ տեղացած հորդառատ անձրեւի պատճառով չի կայացել Հայ ազգային կոնգրեսի նախատեսած երթը: Երթը պետք է մեկնարկեր Սարյանի արձանին հարող պուրակից՝ դեպի ԵԽԽՎ երեւանյան գրասենյակ:

ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբյանի եւ մի քանի պատվիրակների գլխավորությամբ ԵԽԽՎ երեւանյան գրասենյակին է հանձնվել նամակ-պահանջը, որը Կոնգրեսը հավանության էր արժանացրել սեպտեմբերի 29-ի քաղխորհրդի նիստում: Այդ նամակ-պահանջում առաջարկվում է ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովին հոկտեմբերի 4-ի իր նիստում քննարկել ՀԱԿ-ի ներկայացրած ժամանակացույցը, որում ներառված են հետեւյալ պահանջները՝ «քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակում, Ա1+ հեռուստաընկերության վերաբացում, հանրահավաքների, երթերի ազատության ապահովում, արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացում»: Նամակի հանձնումից հետո ՀԱԿ-ի համակիրները հավաքվել են Մ. Սարյանի արձանի մոտ:

Ի դեպ, երեկ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպել է Հարավային Կովկասում ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբիին եւ ՀՀ-ում Եվրոմիության պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուցենբերգերին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են տարածաշրջանային քաղաքականությանն առնչվող հարցեր, ինչպես նաեւ Հայաստանի ներքաղաքական իրավիճակը:

Հանդիպմանը մասնակցել են Հայ ազգային կոնգրեսի կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչներ Լեւոն Զուրաբյանը եւ Ավետիս Ավագյանը:

Հ. Ա.

# «Նաիրիտի» աշխատավարձերի վերաբերյալ

Երեկ՝ 01.10.10, «Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակված տեղեկատվությունը «Նաիրիտ գործարան» ՓԲԸ ղեկավարության աշխատավարձերի չափի վերաբերյալ կարելի էր համարել զվարճալի, եթե այդքան տխուր եւ ակնհայտ սադրանքային չլիներ:

Մեզ համար անակնկալ էր այդպիսի «կատարյալ» տեղեկացվածությունը. իսկ ինչո՞ւ չգրել ավելի կլորիկ ու ցնցող որեւէ թիվ, ասենք՝ 20, 30 կամ 70 միլիոն:

Ինչեւէ, ներկայացված որեւէ թիվ իրականությանը, բնականաբար, չի համապատասխանում: Աշխատավարձերի իրական չափերը նշվածներից տարբերվում են տասնապատիկներով:

Ի դեպ, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունում «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի ողջ աշխատակազմի, ներառյալ՝ գլխավոր տնօրենի եւ իր տեղակալների, աշխատավարձերի մասին տեղեկություններ կան:

Պարզապես, մեկ անգամ եւս հաստատվում է մեզ համար անցանկալի այն իրողությունը, որ ինչ-ինչ ուժեր, ցավոք, օգտագործելով զանգվածային լրատվամիջոցները, ջանքեր չեն խնայում «Նաիրիտը» վարկաբեկելու եւ կատարված աշխատանքի արդյունքներն ի չիք դարձնելու համար:

Պիտի հիասթափեցնենք. «Նաիրիտի» ղեկավարությունը սադրանքների չի ենթարկվում եւ շարունակում է ամենօրյա աշխատանքը՝ կոլեկտիվում սոցիալական լարվածության պատճառները հաղթահարելու եւ գործարանի վերակառուցման ծրագիրը կյանքի կոչելու նպատակով:

**«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ հասարակայնության եւ ԶԼՄ-ների հետ կապերի ծառայություն**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Սեմնեբին ու դինամիկ զարգացող Հայաստան-ԵՄ հարաբերությունները

Դեռեւս սեպտեմբերի սկզբին Ադրբեջան այցելությունից հետո Հարավային Կովկասում Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ **Պիտեր Սեմնեբին** այցելությամբ գտնվում է Հայաստանում: Երեկ Սեմնեբիին ընդունել է Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**:




Պաշտոնական հաղորդագրության համաձայն, նախարար Նալբանդյանը եւ դեսպան Սեմնեբին քննարկել են Հայաստանի եւ Եվրոպական միության համագործակցությանն առնչվող տարբեր հարցեր, գոհունակությամբ նշելով, որ Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունները շարունակում են դինամիկ զարգանալ թե բազմակողմ, թե անդամ երկրների հետ երկկողմ ձեւաչափերով:

Էդվարդ Նալբանդյանն ընդգծել է, որ հուլիսի 19-ին Ասոցացման համաձայնագրի բանակցությունների մեկնարկը նոր լիցք է հաղորդել Հայաստան-ԵՄ հարաբերություններին: Նախարարի խոսքերով, սեպտեմբերի 24-ին ու 27-ին Երեւան-Բրյուսել տեսակամրջի միջոցով տեղի ունեցած բանակցությունները բավականին արդյունավետ էին եւ կարեւոր` հոկտեմբերի 12-ին Բրյուսելում կայանալիք բանակցությունների երկրորդ փուլից առաջ:

Հայաստանի արտգործնախարարն ու ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչը անդրադարձել են նաեւ դեկտեմբերի 13-ին Բրյուսելում կայանալիք Արեւելյան գործընկերության անդամ երկրների ԱԳ նախարարների հանդիպմանը եւ դեկտեմբերի 23-ին նախատեսված Հայաստան ԵՄ համագործակցության խորհրդում քննարկվելիք հարցերին:

Պիտեր Սեմնեբիի խնդրանքով Էդվարդ Նալբանդյանը ներկայացրել է արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վերջին զարգացումները:

Նշենք, որ Բաքու այցելությունից հետո` սեպտեմբերի 8-ին, դեսպան Սեմնեբին եզակի մի անգամ զգուշացում էր արել Ադրբեջանին` անվանական ներկայացնելով ռազմատենչության հովերով հանդես եկող պետության առ այն, որ դա վտանգավոր վարքագիծ է: «Կարծում եմ, ադրբեջանական ղեկավարությունը գիտակցում է այն հսկայական ռիսկը եւ պոտենցիալ կորուստները, որ կապված են հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու փորձերի հետ», Reuters գործակալությանը տված հարցազրույցում հայտնել էր Պիտեր Սեմնեբին:

Հարցազրույցում Սեմնեբին նշել էր, որ հակամարտության շփման գծում ամռանը տեղի ունեցած զինված ընդհարումներն ամենալուրջն էին վերջին գրեթե երկու տարվա ընթացքում: «Շփման գծի երկայնքով մենք ունենք անորոշ իրավիճակ, քանի որ սա ինքնակարգավորվող իրադարձ է, երբ երկու կողմերը գտնվում են դեմ առ դեմ` առանց որեւէ բաժանարար ուժի», իր մտահոգությունը պարզաբանել էր Սեմնեբին, ընդգծելով, որ շփման գծի երկու կողմերում տեղակայված են մեծ քանակությամբ զինվորներ, որոնց նյարդերը կարող են տեղի տալ: Իսկ այդ պարագայում իրավիճակը կարող է դուրս գալ վերահսկողությունից, ուստի պետք է լրջագույնս մոտենալ այս հարցին:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Անին եվրոպական բնորոշման սկիզբն ու վերջն է»

*1-ին էջից*

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի փոխանցմամբ` եկեղեցում նամազ անելը վիրավորական է մահմեդականի համար: «Անիի տաճարը թուրքերը վերածել են անասնագոմի եւ այստեղ Ալլահին աղոթք հղելը վիրավորանք է իսլամին: Անին Եվրոպայի սկիզբն ու վերջն է: Նամազ անելը ապտակ է համաեվրոպական քաղաքակրթությանն, ու թուրքական իշխանությունների գործողություններին պետք է համարժեք գնահատական տա հենց Եվրոպան, որի հազարավոր մշակութային կոթողներ Թուրքիան ոչնչացրել է: Նամազն ապացուցեց, որ դեպի Եվրոպա եւ Եվրոմիություն ձգտող Թուրքիային խորթ են եվրոպական մշակույթն ու քաղաքակրթությունը»:

Հուշարձանագետն էլ քրիստոնեական միջազգային կազմակերպություններից որեւէ ակնկալիք չունի: Այա Սոֆիա քրիստոնեական տաճարի շուրջը մինարեթներ են դրել, այնտեղ նամազ են անում եւ համարում Թուրքիայի կարեւորագույն մզկիթներից մեկը: «Քրիստոնեական աշխարհը վաղուց սովոր է տեսնել մզկիթի վերածված եկեղեցիներ»:

Այս տարի հուշարձանագետը ճամփորդել է Բուլանղ գավառի տարածքում: Խաչլու գյուղում նախկին քրիստոնեական գերազմանատան տեղում կառուցվել էր եռահարկ հիվանդանոց: 2000-ին Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հետ Կարապետյանն այցելել է Բարձր Հայքի Կարնո գավառի հռչակավոր Կարմիր վանքը, որ մեծ միաբանություն է ունեցել, դպրոց եւ գրչօջախ:

«Վանական այդ հսկա համալիրը տեսնելու ցանկությունը մեծ էր: Թուրք ուղեկցորդները խուսացան առաջնորդել: Երկար քայլեցինք կանաչ դաշտերի միջով` հույսով, որ կտեսնենք ճարտարապետական յուրահատուկ կոթողներից մեկը, որը հաստատ կզարդարեր եվրոպական ամեն մի քաղաք»: Հուշարձանագետի զարմանքը մեծ է եղել, երբ թուրք ուղեկցորդը կանգնել է լեռան բարձունքին եւ ասել` հասանք:

Կարապետյանի հարցին, թե որտեղ է վանական համալիրը, ուղեկցորդն ասել է, որ վաղուց են քանդել: «Անգամ կրաշաղախ փոշին չկար, որ մատներ, թե այնտեղ երբեւէ վանական համալիր է եղել: Սա ընդամենը մեկ եկեղեցու պատմություն է: Հայկական հուշարձանների մեծ մասն այսպիսի վիճակում է: Հատուկենտ կոթողներ են պահպանվել, սակայն այդ փշրանքների թիվն ամեն տարի պակասում է: Թուրքերը սրբում են հայկական մշակութային ժառանգության հետքերը: 15 տարի անց այնտեղ որեւէ հայկական եկեղեցի չի լինի: Ամեն օր եկեղեցիներ են ոչնչացվում: Շատ ենք ուշացել: Պետք է փշրանքներն արձանագրել, լուսանկարել, չափագրել, գոնե թղթի վրա փրկել»:

Հուշարձանագետն առաջարկում է պետական մակարդակով միջազգային ատյաններում ներկայացնել խնդիրը եւ իրավական հարթության վրա լուծել ստանալ: Նա ներկայացնում է նախօրեին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձեւը, որով կոչ է արվում թուրքերին Կիպրոսի հյուսիսային հատվածում չոչնչացնել հույներին պատկանող սրբավայրերն ու պատմամշակութային արժեքները, եւ հավելում, որ սա կարող է նախադեպ լինել հայերի համար: Հույները թուրքական կառավարության դեմ 1600 հայց են ներկայացրել միջազգային դատական ատյաններ` հունական բարձրարժեք քրիստոնեական կոթողները ոչնչացնելու համար: Թուրքական կառավարությունը երկու տարի առաջ փոխհատուցում է վճարել. այժմ վերոնշյալ բանաձեւով թուրքերին կոչ են անում վերջ տալ հույների կրոնական ազատությունների դեմ ոտնձգություններին:

Հայկ Դեմոյանը տեղեկացրեց, որ 2011-ին կլրանա Անի մայրաքաղաքի հիմնադրման 1050-ամյակը: Այն կնշվի պետական մակարդակով:

«Երբ Անին մայրաքաղաք էր, թուրքական բարբարոս եւ նողկալի էության որեւէ տարր այնտեղ չկար: Անին եվրոպական բնորոշման սկիզբն ու վերջն է: Այն ժամանակին ավելի մեծ էր, քան Փարիզն ու Լոնդոնը: Սակայն միայն Անիով չպետք է սահմանափակվենք: Անի մայրաքաղաքն ու սահմանում գտնվող հայկական հուշարձաններն ու եկեղեցիները պետք է անվանել մշակութային մերձեցման գոտի եւ վերականգնել»:

Դեմոյանն առաջարկում է նաեւ Անի մայրաքաղաքը ներառել ՅՈՒՆԵՍԿՕ-ի հուշարձանների պահպանման ցանկում:

## ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

# Ադրբեջան-ԱՄՆ հարաբերությունները չեն խորանա, քանի Ալիեւը գահին է

Միացյալ Նահանգները ցանկանում է Ադրբեջանին դաշնակից տեսնել Կովկասում, թեեւ իդեալական դաշնակից այդ երկրի համար մնում է Վրաստանը, որին ու երկրի նախագահ Սաակաշվիլուն սիրում էր ԱՄՆ նախկին նախագահ Բուշը, որից էլ ԱՄՆ-Վրաստան ներկայիս հարաբերությունները մնացել են որպես ժառանգություն:

Այսպիսի տեսակետ հայտնեց երեկ «Ազդակ» ակումբում հյուրընկալված ռուս հայտնի քաղաքագետ, Համաշխարհային անվտանգության ինստիտուտի (ԱՄՆ) ռուսական եւ ասիական ծրագրերի տնօրեն Նիկոլայ Զլոբինը: «Ազգի» խնդրանքով Զլոբինը մեկնաբանեց ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունները, նշելով, որ ԱՄՆ -ին դժվար թե հաջողվի ռազմավարական դաշնակից դարձնել Ադրբեջանին, միեւնույն ժամանակ, հետաքրքրված մնալով էներգետիկ, Իրանի, Աֆղանստանի, Կասպիցի ավազանի հարցերով:

Առավել հետաքրքրական է, որ, ըստ Զլոբինի, Ադրբեջանը դուրս է եկել կովկասյան տարածաշրջանային մակարդակից, զուգահեռաբար այնքան խելացի գտնվելով, որ իր հարցերը մտցրել է ԱՄՆ ներքին քաղաքական շրջանակ: Այս հարցում Հայաստանը չի հաջողել, մինչդեռ ռուս քաղաքագետի ներկայացմամբ, ԱՄՆ աջակցությունը որեւէ հարցում ստանալու համար պետք է նույն այդ հարցը կարեւոր դարձնել ԱՄՆ ներքին քաղաքականության համար, ինչն էլ կպայմանավորի արտաքին քաղաքականության կտրվածքով դրա կարեւորումը:

Ամեն դեպքում, ԱՄՆ-Ադրբեջան հարաբերություններում Միացյալ Նահանգների համար լուրջ սահմանափակումներ կան, որոնք խոչընդոտում են այդ երկու երկրների հարաբերությունների առավել խորացմանն ու զարգացմանը: Եվ դատելով այդ սահմանափակումների բնույթից, դեռ երկար ժամանակ ԱՄՆ-ը չի կարողանա ավելի սերտացնել հարաբերություններն Ադրբեջանի հետ, քանի որ որպես այդ սահմանափակումներ են ներկայացվում Ադրբեջանի ժողովրդավարական խնդիրները, ադրբեջանական քաղաքականության անկանխատեսանելիությունը:

Այս վերջին ցուցանիշը, ըստ Զլոբինի, Հայաստանի պարագայում բավականին դրական դրսեւորում ունի, քանի որ Հայաստանը համեմատաբար կանխատեսելի քաղաքականություն է վարում, ինչը, ելնելով «կանխատեսելի թշնամին ավելի լավ է, քան անկանխատեսելի ընկերը» մոտեցումից Հայաստանը դարձնում է առավել նախընտրելի: Նույն այս համատեքստում, ըստ քաղաքագետի, քաղաքական սխրանք էր Հայաստանի ղեկավարության` հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացը նախաձեռնելու քայլը, ինչի ֆոնին ներկայումս ոչ շահեկան վիճակում է հայտնվել Թուրքիան:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Այցելությունների շքերթը կշարունակվի. նոյեմբերին Հայաստան կժամանի Ուկրաինայի արտգործնախարարը

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը երեկ ընդունել է Հայաստանում Ուկրաինայի նորանշանակ դեսպան Իվան Կուխտային` հավատարմագրերի պատճենների հանձնման կապակցությամբ: Նախարար Նալբանդյանը, շնորհավորելով դեսպան Կուխտային նշանակման կապակցությամբ, հույս է հայտնել, որ նա իր կարեւոր ներդրումը կունենա հայ-ուկրաինական բարեկամական հարաբերությունների առավել ամրապնդման գործում:

Դեսպան Կուխտան, շնորհակալություն հայտնելով մաղթանքների համար, նշել է, որ Ուկրաինան մեծ նշանակություն է տալիս Հայաստանի հետ համակողմանի հարաբերությունների խորացմանը: Իվան Կուխտան կարեւորել է նաեւ Ուկրաինայի հայ համայնքի ներդրումը երկկողմ հարաբերությունների զարգացման գործում:

Նախարար Նալբանդյանն ու դեսպան Կուխտան մտքեր են փոխանակել հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների, նոյեմբերին Հայաստանի արտգործնախարարի հրավերով Ուկրաինայի ԱԳ նախարարի Երեւան կատարելիք այցի, առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման նպատակով ձեռնարկվելիք քայլերի, Հայաստանում եւ Ուկրաինայում փոխադարձ մշակույթի օրերի անցկացմանն առնչվող հարցերի շուրջը:

Ա. Հ.

# Արձագանք «Գալուստյանի» հոդվածին

Խմբագրությունը ինձ հասցեագրված գրություն է ստացել Թովմաս Զաքարյանից, որտեղ նշված է. «Ձեր յօդուածի մէջ յիշուած` Գալուստեան վարժարանը արդէն փակուած ըլլալու լուրը սխալ է... «Հաջորդ տարվանից Կահիրեում արդեն մեկ հայկական վարժարան կլինի» նախադասութիւնը («Առավոտ» թերթում) յստակօրէն կը հաստատէ փակուիլ բայի ժամանակը:... Փակուելու մասին որեւէ խօսք չեմ ըրած, այլ ակնարկութիւնը վարժարանները փոխադրելու կամ մէկտեղելու մասին էր»:

Հարգարժան նամակագրի այս նախադասություններից հստակ է, որ առանձնապես մեծ սխալ չկար գրության մեջ, քանի որ անկախ փակվելու մասին խոսք լինել-չլինելուց, նախ` «վարժարանները մեկտեղելու» գաղափարը ինքնին ենթադրում է դրանցից մեկի փակումը, եւ երկրորդ` հետգրության մեջ նշել էի, որ Եգիպտոսից մեկ այլ աղբյուրի համաձայն, «Ճիշտ է, որ փակման որոշումը առնված է, բայց տեղափոխումը կատարվելու է հաջորդ տարի»:

Ինչ վերաբերում է «Ամէն տեղ գաղթած գալուստեանցիներուն արձագանքին», ապա կարծում ենք, շատ բնական էր, որ նրանք ափսոսանքով ընդունեին այդ լուրը:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Ողնաշարային հիվանդությունների դեմ պայքարելու լավագույն միջոցը մարմնամարզությունն է

***Հայաստանում ողնաշարային հիվանդությունները, կարելի է ասել, այսօր չափազանց տարածված են։ Դրանց առաջացման պատճառները բազմաբնույթ են։***

***18-ամյա աղջիկը, որը չուզեց իր անվան հրապարակումը, մինչեւ անցյալ տարի ունեցել է ողնաշարային հիվանդություն՝ սկոլիոզ։ Նրա սկոլիոզը շատ բարդացած չի եղել ու կարճ ժամանակում բուժվել է։ Բժիշկներն ասել են, որ աղջկա սկոլիոզն առաջացել է դպրոցական պայուսակն անընդհատ մի ուսին կրելու պատճառով։***

## Կեցվածքի շեղումներ՝ սկոլիոզ, խորացած ախտաբանական լորդոզ եւ կիֆոզ

Կեցվածքի շեղումները տարածված են հիմնականում դեռահասների ու երեխաների մեջ։ Սկոլիոզի ժամանակ ողնաշարն իր ուղիղ առանցքից թեքվում է աջ կամ ձախ։ Սկոլիոզի սկզբնական շրջանում, երբ հետեւից նայում ես ողնաշարին, այն ունենում է «C» տառի ձեւ։ Ժամանակի ընթացքում առաջանում է ողնաշարի 2-րդ կորությունը՝ արդեն հակառակ ուղղությամբ, եւ ողնաշարը նմանվում է «S» տառի։

Ողնաշարային հիվանդություններ են նաեւ խորացած ախտաբանական լորդոզն ու կիֆոզը։ Առողջ ողնաշարն ունի առաջ ու հետին ֆիզիոլոգիական կորություններ, ինչը համարվում է նորմալ։ Դեպի առաջ ընկած կորությունը կոչվում է լորդոզ, դեպի հետ ընկած կորությունը՝ կիֆոզ։ Եթե այս կորությունները խորացված են, ուրեմն մարդն ունի կեցվածքի շեղում՝ խորացած ախտաբանական լորդոզ կամ կիֆոզ։

Կինեզիոթերապեւտ **Տիգրան Պետրոսյանն** ասում է, որ դպրոցականների մեջ կեցվածքի շեղումներ են առաջանում սեղանի մոտ, համակարգչի ու հեռուստացույցի առջեւ սխալ դիրքով, այսինքն՝ կռացած նստելու պատճառով։ «Նստելիս մեջքը պետք է ուղիղ պահել, ուսերը՝ հետ։ Կարեւոր է նույնիսկ աշակերտական սեղանի լավ լուսավորվածությունը, որպեսզի երեխան պարապելիս չլարվի. սեղանի լույսը պետք է ընկնի ձախից։ Դպրոցական պայուսակն էլ հարկավոր է կրել ոչ թե մեկ, այլ երկու ուսով», զգուշացնում է կինեզիոթերապեւտը։ Դեռահաս աղջիկների մեջ կեցվածքի շեղումների պատճառ կարող է դառնալ նաեւ երկար ժամանակ բարձրակրունկ կոշիկներ հագնելը։ Տ. Պետրոսյանը տեղեկացնում է, որ երեխաների ոչ ճիշտ մարզվելը նույնպես կարող է հանգեցնել ողնաշարային հիվանդության։ Օրինակ՝ երեխայի ողնաշարը կծռվի, եթե նա մարզագնդերն անընդհատ բարձրացնի ու իջեցնի միայն մի ձեռքով։

«Կան նաեւ երեխաներ, որոնք հակված են ունենալու կեցվածքի շեղումներ՝ կախված իրենց կառուցվածքային առանձնահատկություններից։ Նման դեպքերում սխալ դիրքով նստելը կեցվածքի շեղումների առաջացման համար ոչ թե պատճառ, այլ խթանող հանգամանք է դառնում», ասում է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի նյարդավիրաբուժության բաժանմունքի վարիչ **Դավիթ Պասրիկյանը**։

Մասնագետները ծնողներին խորհուրդ են տալիս ուշադիր լինել եւ առաջին իսկ շեղումները նկատելիս երեխայի հետ դիմել բժշկի։ Եթե բուժումը շուտ սկսվի, ավելի արդյունավետ կլինի։ Օրինակ՝ սկոլիոզը կարող է բարդանալ. առաջին աստիճանից հասնել չորրորդի, ծանր դեպքերում կեցվածքի շեղումներն ուղեկցվում են ցավերով, ուստի բժշկի պետք է դիմել ժամանակին։

## Դեգեներատիվ (այլակերպային) հիվանդություններ՝ օստեոխոնդրոզ եւ միջողնային սկավառակի ճողվածք

Ողնաշարային հիվանդությունները կարելի է բաժանել խմբերի՝ վնասվածքների, ուռուցքային (լինում են նաեւ ողնաշարի ուռուցքներ), դեգեներատիվ հիվանդությունների, կեցվածքի շեղումների եւ այլն։ Ողնաշարի դեգեներատիվ հիվանդություններն ընթանում են հյուսվածքների (աճառային, ոսկրային) քայքայումով։ Օստեոխոնդրոզն ու միջողնային սկավառակի (աճառի) ճողվածքը կամ, ինչպես ժողովուրդն է ասում, «ողնաշարի գռիժան» ձեռքբերովի հիվանդություններ են։

51-ամյա Լաուրան ողնաշարի հետ կապված առաջին գանգատներն ունեցել է դեռ 28 տարեկանում։ Դիմել է բժշկի ու գնացել է բուժման։ Մի քանի ներարկումներից հետո իրեն համեմատաբար լավ է զգացել։ Այնուհետեւ տիկին Լաուրայի համար ծանր տարիներ են սկսվել։ Նա 4 երեխաների է մեծացրել։ «Անընդհատ կռացած լվացք էի անում։ 90-ական թվականներին ջուր էլ չունեինք։ Դույլերով ջուր էի կրում ու 7 հարկ ոտքով բարձրացնում,- պատմում է տիկին Լաուրան,- 40 տարեկանում արդեն մեջքի ուժեղ ցավեր ունեցա, հետո՝ գլխացավեր։ Շուտ էի հոգնում, անընդհատ պառկել էի ուզում»։ Տիկին Լաուրան նորից գնացել է բուժման, որը տեւել է 3 տարի։ Բժիշկներն ախտորոշել են ողնաշարի ճողվածք ու նստանյարդի բորբոքում, որը հենց ողնաշարի ճողվածքի հետեւանքն է։ Ըստ բժիշկների՝ տիկին Լաուրայի հիվանդությունն առաջացել է անընդհատ ծանրություն վերցնելու, բարձրացնելու պատճառով։ «Չնայած այս հիվանդությունն ամբողջովին չի բուժվում, բայց մանուալ թերապիայի գնալուց հետո ինձ ավելի լավ եմ զգում։ Հիմա գոտկատեղի ցավեր միայն ծանրություն վերցնելիս եմ ունենում», պատմում է տիկին Լաուրան։

Ֆիզիկական ծանր աշխատանքն ու մեծ ծանրություն վերցնելը ողնաշարի ճողվածքի առաջացման հիմնական պատճառներն են։ Ըստ նյարդավիրաբույժ **Դավիթ Պասրիկյանի**՝ արդեն ապացուցված է, որ ծխելը եւս նպաստում է օստեոխոնդրոզի ու ողնաշարի ճողվածքի առաջացմանը։ «Ոչ թե քիչ ծխել, այլ պետք է ընդհանրապես չծխել», ասում է Դ. Պասրիկյանը։

Ողնաշարի ճողվածքի ժամանակ հիվանդն ունենում է ոտքերի ու գոտկային ուժեղ ցավեր, ցավից չի կարողանում անգամ նորմալ քայլել, հազիվ է քարշ տալիս ոտքերը։ «Ծանրագույն դեպքերում կարող են լինել նաեւ ակամա միզարձակություն ու արտաթորում», նշում է կինեզիոթերապեւտը։

Ողնաշարի ճողվածք շատ են ունենում հատկապես ծանրամարտիկները։

Դեգեներատիվ հիվանդություն է նաեւ օստեոխոնդրոզը, որը տարածված է ողնաշարի բոլոր հատվածներում՝ սկսած պարանոցային հատվածից, վերջացրած պոչուկայինով։ Մարդիկ երբեմն ասում են, թե օստեոխոնդրոզը ողնաշարի աղային կուտակում է։ Տիգրան Պետրոսյանը բացատրում է, որ օստեոխոնդրոզն աղային կուտակումների հետ ոչ մի կապ չունի. «Օստեոխոնդրոզը միջողնային սկավառակների (դիսկերի) քայքայումով ու տձեւացումով ընթացող հիվանդություն է, որի ժամանակ ողերում կարող է առաջանալ ոսկրային գերաճ»։ Շոշափելով ողնաշարի կոշտացումները՝ շատ անգամ հիվանդներն ասում են, թե դրանք աղային կուտակումներ են։ «Այդ կոշտացումները ոչ թե աղային կուտակումներ, այլ օստեոֆիտներ են՝ ոսկրային կոշտուկներ», ասում է Տ. Պետրոսյանը։

Օստեոխոնդրոզի առաջացմանը նպաստող գործոններից են ֆիզիկական ծանր աշխատանքը եւ համակարգչի առջեւ երկար ժամանակ աշխատելը։ Օստեոխոնդրոզն առաջանում է հիմնականում 30-40 տարեկանից հետո։ «Տարիների ընթացքում մկանները թուլանում են, մանավանդ հայերիս դեպքում, քանի որ չենք զբաղվում սպորտով։ Եթե մկանները թույլ են, բնականաբար, ծանրությունն ընկնում է արդեն ողնաշարի վրա, -բացատրում է կինեզիոթերապեւտը,- հենց այդ ծանրությունից էլ միջողնային սկավառակները վնասվում ու այլակերպվում են՝ պատճառ դառնալով օստեոխոնդրոզի առաջացման համար»։

Օստեոխոնդրոզի հիմնական ախտանշանները ցավերն են։ «Եթե հիվանդը երկար ժամանակ բժշկի չի դիմում ու չի բուժվում, օստեոխոնդրոզը գցում է նրա կյանքի որակը։ Մարդը չի կարողանում նստել, քայլել, ֆիզիկական աշխատանք կատարել», ասում է Դավիթ Պասրիկյանը։

Ողնաշարի ճողվածքի եւ օստեոխոնդրոզի կողմնակի բարդություններից է ռադիկուլիտը, որի դեպքում հիվանդը ձեռքերի կամ ոտքերի ցավեր է ունենում։ Երբեմն վերջույթները թմրում են, եւ հիվանդը դրանք նորմալ ձեւով շարժել չի կարողանում։

«Ըստ մեր բաժանմունքի վիճակագրական տվյալների՝ ողնաշարի դեգեներատիվ հիվանդություններն ավելի տարածված են մինչեւ 55-60 տարեկան տղամարդկանց մեջ, քան նույն տարիքի կանանց։ Դրա պատճառն այն է, որ մինչեւ 55-60 տարեկան դառնալը տղամարդիկ ֆիզիկական աշխատանք ավելի շատ են կատարում, քան կանայք», տեղեկացնում է Դավիթ Պասրիկյանը։ 55-60 տարեկանից հետո արդեն կանայք ավելի շատ են ունենում ողնաշարի դեգեներատիվ հիվանդություններ, քան նույն տարիքի տղամարդիկ։ Դ. Պասրիկյանը բացատրում է, որ 55-60 տարեկանից հետո կալցիումի քանակը կանանց մեծ մասի մեջ պակասում է, տեղի է ունենում դեկալցինացիա, ինչի պատճառով էլ ողնաշարային հիվանդություններ ունեցող կանանց թիվը մի փոքր ավելանում է։

## Ողնուղեղի վնասվածքը՝ ծանրագույն ախտորոշում

Ողնաշարային հիվանդությունների առանձին խումբ են կազմում ողնաշարի վնասվածքները, որոնք կարող են լինել պարանոցային, կրծքային ու գոտկային հատվածներում։ «Տարբերակում ենք 2 ձեւի կոտրվածքներ՝ բարդացած ու չբարդացած։ Եթե կա ողնուղեղի վնասվածք, դա համարում ենք բարդացած կոտրվածք», ասում է նյարդավիրաբույժը եւ ցավով նշում, որ բարդացած կոտրվածքներ ունեցող հիվանդների մեծամասնությունը հաշմանդամ է մնում։ «Ողնուղեղի վերականգնումը շատ բարդ գործընթաց է, սակայն սխալ է ասել, թե ողնուղեղի վնասվածք ունեցողներից ոչ մեկին հնարավոր չէ փրկել հաշմանդամությունից։ Երբ ողնուղեղի վնասվածքով հիվանդ ենք ընդունում, ոչ ոք իրավասու չէ կանխորոշելու հիվանդի ապագան՝ արդյոք նա կկարողանա՞ քայլել, թե՞ ոչ», ավելացնում է նյարդավիրաբույժը։ Եթե կոտրվածքը բարդացած չէ, այսինքն՝ չկա ողնուղեղի վնասվածք, հիվանդների վիճակն ավելի բարվոք է լինում. «Մի քանի ամիս հետո աստիճանաբար վերադառնում են իրենց սովորական կենսակերպին», ասում է Դ. Պասրիկյանը։ Վնասվածքներ մարդիկ կարող են ստանալ հարվածների, վթարների, բարձրությունից ընկնելու, աղետների ժամանակ։ Օրինակ՝ 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո հաշմանդամների թիվը Հայաստանում կտրուկ ավելացավ։

Եթե վնասվածքները լինում են գոտկային ու կրծքային հատվածներում, հիվանդը չի կարողանում շարժել ոտքերը, կարող է խանգարվել նաեւ միզարձակության ֆունկցիան։ Պարանոցային հատվածի վնասվածքների ծայրահեղ դեպքերում չորս ծայրանդամներում էլ հիվանդն ունենում է շարժումների բացակայություն։

Ողնաշարի վնասվածքներով հիվանդներին արագ ու կազմակերպված օգնություն ցուցաբերելը շատ կարեւոր հանգամանք է։ Հիվանդանոցները պետք է ապահովված լինեն համապատասխան պայմաններով ու կադրերով։ Դավիթ Պասրիկյանն ասում է, որ մեր հիվանդանոցներն ապահովված են բոլոր այն միջոցներով, որոնք անհրաժեշտ են ողնաշարի՝ տարբեր մակարդակների վնասվածքներով հիվանդների բուժումը կազմակերպելու համար։ «Ասեմ ավելին՝ վիրահատությունից հետո Կարմիր խաչի հիվանդանոցում հիվանդները կարող են վերականգնողական բուժում ստանալ։ Կարմիր խաչի հիվանդանոցի հետվնասվածքային կենտրոնում է կազմակերպվում վերականգնողական բուժումը», տեղեկացնում է նյարդավիրաբույժը։

Ողնաշարի վնասվածքը մարդու համար կարող է ճակատագրական լինել։ Միշտ չէ, որ հիվանդները կարողանում են շրջանցել հաշմանդամությունը։ Չկարողանալով քայլել՝ նրանք ընկնում են սոցիալ-հոգեբանական ծանր վիճակի մեջ։ «Ողնաշարի վնասվածքներով հիվանդների ոչ միայն բուժման հարցերն են կարեւոր, այլեւ նրանց մեր կյանքի ու առօրյայի մեջ լիարժեք ընդգրկելու գործընթացը, - նշում է Դավիթ Պասրիկյանը,- այս ուղղությամբ շատ քայլեր արդեն արվում են, չնայած դրանք բավարար մակարդակից դեռեւս հեռու են»։ Նյարդավիրաբույժը նկատել է, որ փողոցների մայթեզրերն անցումների մասում այլեւս բարձր չեն կառուցվում։ Արդեն կան գետնանցումներ, խանութներ ու շենքեր, որտեղ սայլակներով մարդիկ կարողանում են ինքնուրույն ելումուտ անել։ «Այս ամենն օգնում է, որ վերականգնողական բուժումից հետո մարդիկ ինքնուրույն ապրել կարողանան», հավելում է Դ. Պասրիկյանը։

Կոտրվածքները, իհարկե, պատահականության հետեւանքն են. վթարներն ու աղետները չկանխատեսված են։ Այնուամենայնիվ, բժիշկ Պասրիկյանը խորհուրդ է տալիս զգույշ լինել. «Պետք է խուսափել բարձր տեղերից թռչելուց։ Թռչելիս ծանրությունը ոչ միայն ոտքերի վրա է ընկնում, այլեւ ողնաշարի»։

## Ողնաշարային հիվանդությունների բուժումն ու կանխարգելումը

«Օրինակ՝ կեցվածքի շեղումները կանխարգելելն ավելի հեշտ գործ է, քան դրանք բուժելը, ուստի դեռ փոքր տարիքից ողնաշարի հետ երեխան պետք է ճիշտ վարվի», նշում է Տիգրան Պետրոսյանը, ապա բացատրում. «Երեխան պետք է նստի մեջքն ուղիղ, կատարի չափավոր մարմնամարզություն»։ Առհասարակ, մարմնամարզությամբ պետք է բոլորս զբաղվենք. չափավոր մարզումները զարգացնում, ուժեղացնում են մկանները, ինչի շնորհիվ ծանրությունը միայն ողնաշարի վրա չի ընկնում։ «Լողը, վազքը, տարբեր ձեւերի սպորտային խաղերը շատ օգտակար են առողջության համար», հավելում է Դավիթ Պասրիկյանը։

Ողնաշարի դեգեներատիվ հիվանդությունների առաջացումն օրինաչափ ու բնականոն գործընթաց է։ «Դեգեներատիվ գործընթացը մենք չենք կարող ընդհատել կամ վերացնել, բայց դանդաղեցնել կարող ենք», բացատրում է բժիշկ Պասրիկյանը։ Մարմնամարզությունը, չծխելը, առողջ ապրելակերպը կարող են դանդաղեցնել դեգեներատիվ գործընթացները եւ օգնել, որ վիրահատության կամ այլ տեսակի բուժումների կարիք չզգացվի։ Նյարդավիրաբույժը խորհուրդ է տալիս խուսափել ֆիզիկական ծանր աշխատանքից ու մեծ ծանրություն վերցնելուց. «Ողնաշարը վերամբարձ կռունկ չէ։ Ես չեմ ասում՝ մարդն ընդհանրապես չպետք է կատարի ֆիզիկական աշխատանք, իհարկե, պետք է կատարի, բայց չափավոր՝ ոչ թե իր ուժերի ներած չափով, այլ ուժերի ներածից էլ քիչ»։ Կարեւոր հանգամանք է նաեւ չգիրանալը, որովհետեւ ողնաշարի վրա գիրությունն ավելորդ ծանրաբեռնություն է։

Տիգրան Պետրոսյանը նշում է, որ հազվադեպ է հնարավոր լինում ամբողջովին բուժել կամ շտկել ողնաշարային հիվանդությունները. «Հաճախ մնացորդային երեւույթներն անխուսափելի են անգամ վիրահատությունից հետո»։

Ամբողջ աշխարհում այսօր բուժման մեջ առաջնային տեղ են տալիս ֆիզիկական մեթոդներին՝ շտկող ֆիզիկական վարժություններին, ֆիզիոթերապիային, մերսումներին ու մանուալ թերապիային։ Դեղորայքային բուժմանը դիմում են այն ժամանակ, երբ հիվանդն ուժեղ ցավեր է ունենում։ «Եթե կա ցավ կամ նյարդի բորբոքում, որը ողնաշարային հիվանդության հետեւանքն է, ապա առաջնահերթը դեղորայքային բուժումն է։ Բոլոր դեպքերում էլ մինչեւ ցավը չանցնի, չես կարող մտածել ֆիզիկական վերականգնման մասին», ասում է կինեզիոթերապեւտը։ Ինչ վերաբերում է վիրաբուժական միջամտությանը, Տ. Պետրոսյանը նշում է. «Ողնաշարի ճողվածքի ժամանակ, եթե կան երկարատեւ, ուժեղ ցավեր, միզարձակության խանգարումներ, արդեն դիմում են վիրահատության»։ Դավիթ Պասրիկյանի փոխանցմամբ՝ «Արմենիա» բժշկական կենտրոնում ողնաշարի ճողվածքի մեկ վիրահատության արժեքը 130 հազար դրամ է, եւ ըստ բժշկի՝ սա ամենաէժան գինն է ամբողջ հանրապետությունում։ Դ. Պասրիկյանը նշում է, որ մարդիկ սկսել են բժիշկներին ավելի շատ դիմել. «Լինում է, որ շաբաթական ողնաշարի ճողվածքի 2-3 վիրահատություն ենք անում, իսկ տարեկան կտրվածքով՝ 100-ից ավելի վիրահատություն»։

Վիրաբուժական միջամտությանը դիմում են նաեւ կեցվածքի բարդացած շեղումների դեպքում, երբ հիվանդությունն արդեն խանգարում է սրտի աշխատանքին ու շնչառությանը։

Տիգրան Պետրոսյանը խորհուրդ է տալիս ողնաշարային հիվանդությունների ժամանակ խուսափել ինքնաբուժումից։ Սխալ մերսումներն ու ֆիզիկական վարժությունները, ոչ համապատասխան դեղորայքը կարող են հիվանդի վիճակն ավելի վատացնել։ Հաճախ մարդիկ դիմում են «ժողովրդական բժիշկների», օրինակ՝ հեքիմների օգնությանը, ինչը կարող է չօգնել հիվանդին։ «Բարդություններից խուսափելու համար լավ կլինի միանգամից պրոֆեսիոնալ բժիշկների դիմել», հավելում է բժիշկ Պետրոսյանը, ապա ընդգծում. «Մասնագետին էլ պետք է հնարավորինս շուտ դիմել՝ առաջին իսկ ախտանշանները նկատելիս»։

Ողնաշարային հիվանդությունների բուժման տեւողությունը խիստ անհատական է՝ կախված հիվանդի վիճակից ու տարիքից։

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Բիզնեսում թուրքերի համար միակ ազգությունը փողն է

Կարծեմ «Շանթ» հեռուստաընկերության լրագրողը Թուրքիա մեկնած լրագրողներիս Հայաստանում հարցրեց. «Ինչո՞ւ էիք մեկնել». թեեւ հարցի արտաքին երեւույթն անկողմնակալ էր, բայց ենթատեքստ զգացվում էր, թե լավ, ինչո՞ւ էիք, ախր, գնացել: Նրան պատասխանեցի եւ հիմա էլ «**Ազգի**» ընթերցողին եմ ասում, որ Թուրքիա գնալ եւ այդ երկրի այսօրվա կյանքը տեսնել պետք է, որ նախ հասկանաս իրականում ո՞ւմ հետ գործ ունես այսօր, հասկանաս թուրքական անկեղծության եւ թուրքական կեղծիքի ողջ դիապազոնը, ապա եւ ըստ այդմ տարբեր ոլորտներում համարժեք կեցվածք որդեգրես: Հասկանաս, որ Թուրքիան ամեն ինչ անում է տնտեսական շահ ստանալու համար, բայց եւ եթե պետությունը մի դիրքորոշում է որդեգրել, նրա քաղաքացիները այդ դիրքորոշման շուրջը մանեւրում են, բայց այն զանց չեն առնում:

Բաղդատելու բան այնուամենայնիվ կա: Ասենք` տուրիզմի ոլորտում ամենուր զգացվում էր, որ այս երկիրն, իսկապես, ուզում է տուրիզմը զարգացնել, շահ ստանալ, բայց նախ` իսկապես դրա համար պայմաններ ստեղծելով: Ստամբուլում հյուրանոցները բավական էժան էին` այստեղ հյուրանոցների մեծ ընտրություն կա, ընդ որում ամենաէժան հյուրանոցներում անգամ սպասարկման նվազագույն «սերվիսն» ապահովված է: Անկրկնելի հյուրանոցների հետ, որոնց օրավճարը Հայաստանի հյուրանոցների միջին գների համեմատ նույնիսկ էժան է, կան նաեւ օրական 12-15 դոլար արժեցող հյուրանոցային սենյակներ, որոնցում, միեւնույնն է, նույն կերպ բոլոր հարմարությունները առկա են, առավոտյան սնունդը` նույնպես: Ամենուր սպասարկում են ժպիտով, առանց գոնե առերես խտրականության որեւէ ազգի հանդէպ` բիզնեսում թուրքերի համար միակ ազգությունը, միակ դավանանքը փողն է դարձել, համենայն դեպս` գոնե Ստամբուլում: Էժան է նաեւ ինքնաթիռի տոմսը. Երեւան-Ստամբուլ ինքնաթիռի` թուրքական «Ատլաս» ավիաընկերության վաճառած տոմսի արժեքն, օրինակ, մոտ 30 տոկոսով էժան է նույն հեռավորության թռիչք իրականացնող «Արմավիայի» Երեւան-Օդեսա թռիչքի տոմսից: Էժանություն եւ որակյալ ծառայությունների մեծ շրջանակ, ահա այն շատ կարեւոր պատճառը, որը աշխարհի տարբեր անկյուններից հազարավոր տուրիստների է բերում Ստամբուլ, Բոսֆորի ափեր, Անթալիա` միլիոնավոր դոլարներ հոսեցնելով եւ հզորացնելով Թուրքիան: Իսկ Հայաստանում մերոնք շարունակում են առաջարկել միայն «Գնենք մերը» կամ այս կարգի այլ հայրենասիրական կարգախոսներ, դրանք համադրելով հյուրանոցների անխիղճ եւ չտրամաբանված թանկությամբ, անորակ ծառայություններով. օրինակ, բիզնեսի առումով որեւէ արդարացում չունի այնպիսի իրավիճակը, երբ երիտասարդ զույգը Ջերմուկում Նոր տարին 6-7 օրով անցկացնելու համար վճարում է 300 հազար դրամի կարգի գումար, սակայն արդեն երկրորդ օրը պարզում է, որ պետք է բավարարվի մակարոնով եւ հավելյալ վճարի ամեն անգամ զբաղմունքի ծառայությունների համար, եւ դեկտեմբերի 31-ի գիշերը գցած քյուֆթայի սառը մնացորդները կրկնակի- եռակի տաքացրած մի երեք օր փորձի ուտել, իսկ արդեն երրորդ օրը, զգալով, որ Նորի տարին փչացնում է ու լքելով ջերմուկյան այդ «հրաշքը»` ոչ ներողության արժանանա, ոչ էլ վճարած իսկայական գումարի գոնե մի մասը վերադարձնելուն: Այսինքն` մերոնք տասնյակ անգամ ավելիի շահույթ են ակնկալում եւ գոնե հաճախորդի վճարածի մեկ տասներորդի չափ չեն ուզում սպասարկել` մեկ պատճառաբանությամբ. Հայաստանում ամեն ինչ թանկ է, շահ ստանալ հնարավոր չէ... Հետո էլ, անգամ պաշտոնական մակարդակով կարելի է լսել, թե Անթալիա գնալը հայրենասիրություն չէ. հայրենասիրություն է ագահորեն եւ առանց ծառայություն մատուցելու գումարներ գռփելը, հինգաստղանիի տակ անգամ մեկ աստղին անարժան ինչ-որ կասկածելի հյուրանոցային սենյակ առաջարկելը...Պարզ է, որ Թուրքիայում, քանակի վրա աշխատելով` որակ էլ են ապահովելու, իսկ Հայաստանը, սիրուն կարգախոսներ բարձրաձայնելով, դոփելու է նույն տեղում` տուրիզմի զարգացման միայն երազանքը փողհարելով: Դատարկ կարգախոսներով տուրիզմ չենք զարգացնի, եւ այդպես մեր հրաշալի բնությունն ու պատմական հուշարձանները կմնան առանց տուրիստ, երկիրն էլ իր աղքատության նիրհից գոնե այս հնարավոր ոլորտում մի քանի խազով չի բարձրանա շահույթի առումով: Մնացածը էմոցիա է, անընդունելի` երկրի զարգացումն իրապես ուզողների պատուհանից:



Առեւտրի մասին` Թուրքիայում ամենուր, անգամ մեծ խանութներում եւ սուպերմարկետներում տեղում գները զեղչելու ճկուն համակարգ է գործում, արտադրողները իրենց ողջ արտադրությունը զարգացնում են էժան եւ արագ սպառումով, որն ի վերջո բերում է շահույթի ու որակի, թուրքական ապրանքների ավելի շատ տեսակներ են որակյալ դառնում` սպառման մեծ շուկա ունենալու պատճառով. այստեղ խթանում են արտահանումը, չեն խեղդում հատկապես մանր արտադրողին` դա աչքի էր զարկում ամենուր, ե՛ւ փոքր քաղաքներում (Վանում եւ Անկարայում դա տեսանելի էր), ե՛ւ հատկապես Ստամբուլում: Անգամ Հայաստանից ներմուծված ոչխարի կաշին, որը վերամշակելուց հետո կաշվե հագուստեղեն է դառնում, նույն հայաստանցի հայերին այստեղ բավական էժան են վաճառում, մինչդեռ մերոնք այստեղ այդ կաշվեղենը նվազագույնը երեք անգամ ավելիով են փորձում իրացնել: Այսինքն` այն դինամիկան, որ նկատելի է թուրքական մանրածախ եւ մեծածախ առեւտրում, հենց բիզնեսում ճկուն մտածողության եւ սեփական արտադրողին խիստ չճնշելու արդյունքում է, որը մեծ հաշվով անդրադառնում է թուրքերի ընդհանուր կենսամակարդակի վրա:

Ասենք, որ Հայաստանից իսկապես աշխատանքային միգրանտների ինչ-որ հոսք կա Ստամբուլում: Ամենատարբեր մակարդակների ճշտումները համադրելով` մենք կանգ առանք 8-10 հազար մարդու վրա, այդպես էին կարծում նաեւ Գումքափը թաղամասում, որը համարվում է Հայաստանից գնացած եւ Ստամբուլում աշխատող հայերի թաղամաս, եւ անգամ շատ թուրքերի ամիսներ առաջ Էրդողանի ասած թիվը հայ միգրանտների մասին ծիծաղելի էր թվում: Գումքափը թաղամասում Հայաստանից գնացած հայերը մի երեք-չորս հոգով միանալով` 400 թուրքական լիրայով (կամ մոտավորապես 250 դոլարով) մի 50 քմ-անոց տուն են վարձում, աշխատում` տղամարդիկ դերձակ, ոսկերիչ, շինարարության բանվոր, կանայք խանութներում եւ տներում են ծառայում, վաստակում միջինը 800 դոլարի չափ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Հոլանդիան կարգելի փարանջան եւ կսահմանափակի ներգաղթը

**Հոլանդիայի հասարակական վայրերում փարանջա կրելը կարգելվի: Նման հայտարարություն է արել խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի պատգամավոր, ծայրահեղ աջ Ազատության կուսակցության առաջնորդ Գիիրտ Վիլդերսը:**

**Նոր կառավարության ձեւավորման նպատակով անցկացվող միջկուսակցական բանակցությունների կապակցությամբ Վիլդերսը լրագրողներին ասել է, որ նախատեսվում է ոչ միայն արգելել փարանջան, այլեւ կտրուկ սահմանափակել ներգաղթը:**

**Վիլդերսի կուսակցությունը պաշտոնապես չի մտնելու Ազատության եւ ժողովրդավարության ժողովրդական կուսակցության եւ Քրիստոնեա-ժողովրդավարական կոչի կազմած կոալիցիայի մեջ, սակայն Ազատության կուսակցության պատգամավորները պաշտպանելու են փոքրամասնական կոալիցիոն կառավարության նախաձեռնությունները: Բանակցությունների ընթացքում ձեռք բերված այս համաձայնության մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Ինչ վերաբերում է փարանջայի արգելմանը, Հոլանդիայից առաջ համանման որոշումներ ընդունվել էին եվրոպական մի շարք երկրներում: 2011-ի գարնանից Ֆրանսիայում ուժի մեջ կմտնի սեպտեմբերի 14-ին Սենատի ընդունած օրենքը, որով արգելվում է փարանջա, չադրա եւ նիկաբ կրել հասարակական վայրերում:**

**Իտալիայում 1975-ից գործող օրենքն արգելում է հասարակական վայրում դեմքը ծածկել փարանջայով կամ մոտոցիկլիստի սաղավարտով:**

**Բելգիայի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատը 2010-ի ապրիլի 29-ին ընդունեց օրինագիծ, որով արգելվում է կրել մարդու դեմքը ծածկող որեւէ հագուստ: Այդ փաստաթուղթը դեռ պետք է ստանա Սենատի հավանությունը, որպեսզի դառնա օրենք:**

## Ասանժ. «Պենտագոնն ուզում է ոչնչացնել WikiLeaks-ը»

**WikiLeaks կայքի հիմնադիր Ջուլիան Ասանժը Պենտագոնին մեղադրել է կայքը ոչնչացնելու եւ դրա անձնակազմը քայքայելու փորձերի մեջ: Նա համապատասխան հայտարարություն է արել Լոնդոնում, որտեղ գտնվում է ներկայումս:**

**Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ վերջերս Շվեդիայում Ասանժին ամբաստանել էին բռնաբարության մեջ եւ գրեթե անմիջապես չեղյալ էին հայտարարել ամբաստանությունը: Ասանժի խոսքերով, Պենտագոնը WikiLeaks-ի վարչությունից պահանջել է ոչնչացնել արդեն հրապարակած նյութերը, ներառյալ «աֆղանական փաթեթը»:**

**Ասոշիեյթեդ պրեսը հաղորդում է, որ Ասանժի լոնդոնյան ելույթը հաջորդեց այն հաղորդումներին, որ WikiLeaks-ը ճգնաժամ է ապրում կայքի վարչության ներքին վեճերի պատճառով: Որոշ տվյալների համաձայն, կարեւոր աշխատակիցները հեռացել են, բողոքելով առանց կայքի իրազեկիչների պատշաճ անվտանգության ապահովման տասնյակ հազարավոր փաստաթղթեր հրապարակելու Ասանժի որոշման դեմ:**

**Ավստրալացի ծրագրավորող Ասանժի 2006-ին հիմնած կայքը սկանդալ առաջացրեց 2010-ի հուլիսին, երբ հրապարակեց Աֆղանստանում ԱՄՆ-ի ռազմական գործողություններին առնչվող 75 հազար գաղտնի փաստաթղթեր: Հրապարակումից հետո Պենտագոնը քրեական հետաքննություն սկսեց տեղեկությունների արտահոսքի փաստի կապակցությամբ: Զինվոր Բրեդլի Մենինգին ներկայացվել էին ապօրինաբար տեղեկատվություն ստանալու եւ այն հրապարակելու մեղադրանքներ:**

**Այդուհանդերձ Ասանժը խոստացել է հրապարակել Աֆղանստանին վերաբերող եւս 15 հազար փաստաթուղթ, ինչպես նաեւ Իրաքի պատերազմի հետ կապված բյուրավոր փաստաթղթեր:**

**Ի դեպ, ներկայումս WikiLeaks.org կայքը չի գործում: Դրա տեղում հաղորդվում է, որ կայքը ժամանակավորապես փակված է պլանային տեխնիկական աշխատանքների պատճառով:**

## Մասոնները փորձել են հեղաշրջում կազմակերպել Անգոլայում

**Այս պատմության գլխավոր գործող անձինք ապրում են Իտալիայի Բենեվենտո քաղաքում: Նրանցից մեկը Enel պետական էլեկտրաէներգետիկական ընկերության նախկին ղեկավարն է: La Repubblica թերթը հաղորդում է, որ մի խումբ իտալացի մասոններ փորձել են ապստամբություն հրահրել Անգոլայի նավթառատ Կաբինդա նահանգում եւ ստեղծել անկախ պետություն, որպեսզի ձեռք բերեն բնապաշարների եւ առաջին հերթին նավթի արտահանման մենաշնորհություն: Բայց նրանք կդատվեն ոչ թե պետական հեղաշրջման փորձ կատարելու եւ գաղտնի կազմակերպություններին վերաբերող օրենքը խախտելու համար, այլ վարձկանների հավաքագրումն արգելող ՄԱԿ-ի կոնվենցիան խախտելու, ինչպես նաեւ հարկային ոլորտում խարդախություն անելու համար, գրում է թերթը:**

**Խոսքը մեկ դյուժին մասոնների մասին է: Նրանց թվում են Enel-ի նախկին ղեկավար Ջուզեպպե Տանգան, Իտալիայի մասոնական Մեծ անկախ օթյակի մեծ վարպետության թեկնածու Ռոբերտո Ամատոն, ինչպես նաեւ միջազգային խարդախ, մասոն Պիրետ Գաբիռո Ռուին, որին համարում են Կաբինդայի հետ կապող գլխավոր օղակը:**

**Դավադիրները մտադրվել էին խռովություն կազմակերպել Անգոլայի այդ նահանգում, որտեղ շատ տարիներ գործում են անջատական շարժումներ, ստեղծել ինքնավար պետություն, որպեսզի հետագայում երկրի տնտեսական ապարատում հիմնավորվեն Progetto Europa Consulting Firm ընկերության միջոցով եւ միջամտեն Իտալիայի հետ նոր պետության դիվանագիտական եւ առեւտրական հարաբերություններին:**

**Թերթի տվյալներով, դավադիրները ֆինանսավորել են 30 վարձկանների հավաքագրումն ու պատրաստությունը, որոնք պետք է զինված հակամարտություն հրահրեին անգոլական տարածքում: Նպատակը խոշոր շահույթներն էին: Դեռ «Կաբինդայի հեղափոխությունից» առաջ մասոնական մեքենան հիմնել էր Freedom for Cabinda եւ Freedom for Cabinda Confederation ոչ առեւտրային կազմակերպությունները: Դրանց նվիրաբերվող գումարները ծառայում էին ոչ թե թվացյալ հեղափոխությանը, այլ քողարկում էին նվիրատու ընկերությունների եկամուտները: Միջոցները նաեւ փոխանցվում էին գաղտնի կազմակերպության անդամների հաշիվներին:**

## Ոստիկանների հեղաշրջման փորձից հետո Էկվադորի ոստիկանապետը հրաժարական տվեց

Էկվադորի ազգային ոստիկանության պետ, գեներալ Ֆրեդդի Մարտինեսը երեկ հրաժարական է տվել իր ենթակաների կազմակերպած խռովության հետեւանքով, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ավելի վաղ իշխանություններին հավատարիմ մնացած ոստիկանական ստորաբաժանումները ազատագրել էին խռովարարների կողմից Կիտոյի հիվանդանոցում շրջափակված նախագահ Ռաֆայել Կորեային: Գործողության ընթացքում սպանվել էր երկու խռովարար: Հավատարիմ ուժերին շնորհակալություն հայտնելով` նախագահը հայտարարել է, որ խռովարարների նպատակը իրեն սպանելն է:

Էկվադորում խռովությունները սկսվել էին սեպտեմբերի 30-ին: Առիթը պետական ծախսերը, այդ թվում` ոստիկանների եւ զինվորականների ռոճիկները կրճատող օրենքն է: Հարյուրավոր ոստիկաններ եւ զինվորականներ Կիտոյի փողոցներ էին դուրս եկել` բողոքելով նոր օրենքի դեմ եւ պահանջելով նախկին դրույքաչափերի պահպանում:

Խռովարարներին հաջողվել էր մի քանի ժամով գրավել Կիտոյի օդանավակայանը եւ խորհրդարանի շենքը: Խռովություններ էին սկսվել նաեւ Գուայաքիլ եւ Կուենկա քաղաքներում: Նախագահ Կորեան այդ ամենը որակել էր իբրեւ պետական հեղաշրջման փորձ:

Երկրում հայտարարված է արտակարգ դրություն:

# ՄՇԱԿՈՒՅԹ

## «Հայաստանում ամենից շատ սիրում եմ ժողովրդին»

### Ասում է ամերիկացի հանրահայտ երգիչ Դանիել Դեքերը

Հոկտեմբերի 9-ին, ժամը 19-ին Արամ Խաչատրան համերգասրահում համերգային ծրագրով հանդես է գալու ամերիկացի երգիչ, երգահան Դանիել Դեքերը: Հայ հասարակության մեջ Դանիել Դեքերի անունը հայտնի դարձավ «Մուշ» ստեղծագործությունից հետ: Այնուհետեւ Դեքերը գրեց իր «Ադանա» երգը, որը հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած նրա սիրո ու հարգանքի յուրահատուկ դրսեւորումն է: «Ադանա» ստեղծագործությունը թարգմանվել է տարբեր լեզուներով, 19 ազգեր արդեն երգում են «Ադանան»: Այս երգի մեջ Դանիել Դեքերը պատմում է Հայոց ցեղասպանության մասին:




Ամերիկացի երգիչը հիմա Հայաստանում է: Երեկ «Դե ֆակտո» ակումբում նա հանդիպեց լրագրողների հետ: «Ոսկե կամուրջ» մշակութային միջոցառումների մեկնարկը լինելու է հենց Դանիել Դեքերի համերգով հոկտեմբերի 9-ին: Ամերիկացի երգիչը պատմեց, որ առաջին անգամ հայկական երաժշտությանը նա ծանոթացել է կոմպոզիտոր Արա Գեւորգյանի միջոցով: «Առաջին անգամ լսելով հայկական երաժշտությունը՝ հասկացա, որ յուրահատուկ բան կա ոչ միայն երաժշտության, այլեւ հայերի մեջ: Այդքան դժվարությունների միջով անցած ժողովուրդը զարմանալի է, որ կարող է այսքան ուժեղ լինել: Իմ նպատակն է քաջալերել ոչ միայն Հայաստանի, այլեւ ամբողջ աշխարհում ապրող հայերին», ասաց Դանիել Դեքերը: Երգչին միշտ հարցնում են, եթե հայ չէ, էլ ինչու՞ է երգում հայերեն: Բացի նրանից, որ երգիչը շատ է սիրում Հայաստանը, նա նաեւ այսպիսի պատասխան տվեց. «Եթե Հայաստանը չափենք ըստ տարածքի, կտեսնենք, որ հայերը փոքր ազգ են: Եթե չափենք սրտի խորությամբ, ապա կտեսնենք, որ հայերը մեծ կայսրություն ունեն»: Դանիել Դեքերը նշեց, որ Հայաստանում ամենից շատ սիրում է հայ ժողովրդին. «Հուսով եմ իմ աշխատանքի միջոցով կարող եմ օգնել հայերին հասկանալու, որ նրանք մենակ չեն»: Որ Դանիել Դեքերը բարձրաձայնում է Հայոց ցեղասպանության մասին, բնականաբար, թուրքերը դա խաղաղ ու հանգիստ չեն ընդունի: Երգիչը պատմեց, որ թուրքերը սպառնացել են նրան, բայց դա իրեն ամենեւին էլ չի վախեցնում: Մինչեւ համերգը Հայաստանում լինելու է նաեւ Դանիել Դեքերի «Ընտրությամբ՝ հայ» ձայնասկավառակի շնորհանդեսը:

Համերգի գեղարվեստական ղեկավար Արմեն Ատոնցն էլ անդրադարձավ «Ոսկե կամուրջ» մշակութային միջոցառմանը. «Որպես նախագծի գեղ. ղեկավար ասեմ, որ այս նախագծի շրջանակներում ուզում ենք ներկայացնել օտարալեզու այն կոմպոզիտորներին, որոնք առնչություն ունեն հայ երգի, երաժշտության ու մշակույթի հետ»: Ա. Ատոնցը նաեւ տեղեկացրեց, որ այս անգամ միայն մի համերգ է լինելու:

Ի. Պ.

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐ ՍԻՐԻԱՅՈՒՄ

## Այցելություն Դեր Զոր եւ եզրափակիչ համերգ Հալեպում

***Մեր թերթն արդեն գրել է սեպտեմբերի 23-29-ը Սիրիայում անցկացված «Հայկական մշակույթի օրերի» մասին, հետեւաբար Սիրիայից նոր վերադարձած մեր թղթակիցը ստորեւ ներկայացնում է հայկական պատվիրակության Դեր Զոր կատարած այցից ստացած տպավորությունները:***

Սեպտեմբերի 25-ին հայկական պատվիրակությունն ավտոբուսներով մեկնեց Դեր Զոր, ճանապարհին այցելեց պատմական Պալմիրայի հուշահամալիր ու շարունակեց ճանապարհը: Չնայած որ ճանապարհին, մոտ 4 ժամ, անապատում մրրիկ բարձրացավ ու ճանապարհն ամբողջովին պատվեց ավազափոշով, հմուտ վարորդները կարողացան դուրս գալ մրրիկի միջից ու բարեհաջող ժամանեցինք Դեր Զոր, որտեղ ՀՀ պատվո հյուպատոս **Սուրեն Վարդանյանը** նահանգի բարձրաստիճան այրերի հետ դիմավորեցին Հայաստանից ժամանած հյուրերին: Երեկոյան այցելեցինք Եփրատ գետի վրա ֆրանսիացիների կառուցած (1932 թ.) կախված կամուրջ, նավով շրջեցինք գետի վրա եւ ի հարգանս 1915-ի անմեղ զոհերի՝ հնչեցին հայկական ժողովրդական երգեր:



Առավոտյան պատվիրակությունն այցելեց Դեր Զորի Հայ առաքելական Սուրբ Նահատակաց եկեղեցի, հոգեւոր հովվի հետ մասնակցեց պատարագին, ծնկեց նահատակների հիշատակի կոթողի առջեւ, դիտեց «Եղեռնի ճամփան» փաստավավերագրական ֆիլմն ու գլուխ խոնարհեց նահատակների հիշատակին կանգնեցրած խաչքարի մոտ: Ցեղասպանության վկա Սիրիայի անապատ այցը ցնցել էր բոլորին, երբ **Մաշտոց քահանա Աղաբաբյանը** ներկայացրեց Դեր Զոր հասած հայերի տառապանքները, նշեց. «Անապատի որ մասում էլ ավազը փորես, հայի ոսկորներ է դուրս գալիս»: Քիչ անց Կոմիտասի շարականներն ու երգերը հնչեցին «Թաթուլ Ալթունյան» անսամբլի երգիչների կատարմամբ ու նրանց երգի հնչյունները տարածվում էին ու արձագանքվում...

Երեկոյան քաղաքի մշակույթի պալատում կայացավ գալա-համերգ, որը բացվեց տեղի արաբական պարախմբի ողջույն-ելույթով: Համերգին ներկա էին նահանգի բարձրաստիճան այրերը՝ նահանգապետի գլխավորությամբ, նաեւ պատվո հյուպատոս Սուրեն Վարդանյանը: **«Ազգի»** հետ զրույցում պրն Վարդանյանը նշեց, որ Դեր Զորում ապրում են 150 հայեր (25 ընտանիք) եւ բոլորն էլ համարվում են ավտոմոբիլի լավագույն մասնագետներ, հարուստ են ու համախմբված: Ի դեպ, Հայաստանի Անկախության 19-րդ տարեդարձի առիթով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Սուրեն Վարդանյանին է հանձնել «Մովսես Խորենացի» շքանշանը: Գալա-համերգն անցավ հրաշալի ու անջնջելի տպավորություններ թողեց ոչ միայն հայերի, այլեւ արաբների վրա:

**Հակոբ Յեղիյանն** արդեն 25 տարի բնակվում է նահանգում, այնքան էր հուզվել, որ արցունքները գլորվում էին այտերի վրայով, ու հուզված մեկ-մեկ մոտենում էր, շնորհավորում եւ խնդրում, որ կրկին այցելեն իրենց, քանզի կարոտ են հայկական մշակույթին: «Եկեք, մենք ձեզ միշտ սպասում ենք, մայր հայրենիքից հույս ու ջերմություն բերեք մեզ... », ասում էր նա:

«Հայկական մշակույթի օրերի» պաշտոնական եզրափակիչ ելույթը կայացավ Հալեպի մշակույթի խոշոր կենտրոնում, որտեղ ներկա էին Սիրիայի նախագահի տիկինը, պաշտոնատար շատ այրեր, օտարերկրյա դեսպաններ, հայեր, արաբներ, հնդիկներ:

Համերգից առաջ Հալեպի մշակույթի գերատեսչության պետ **Ղալեբ ալ-Բարհուդին** ողջունեց ու բարձր գնահատեց հայ-սիրիական դարավոր բարեկամությունը եւ փոխանցեց երկրի ղեկավարի ողջույնն ու «Թ. Ալթունյան» անսամբլին հանձնեց մշակույթի կենտրոնի հատուկ հուշանվերը՝ բարձրարժեք մշակույթ մատուցելու համար: Վերջին համերգը, որը տեւեց 2 ժամից ավելի, անկրկնելի տպավորություն էր թողել ներկաների վրա, եւ վերջիններիս պահանջով՝ համարները կրկնում էին: Ոգեւորված էր նաեւ Ղամրշլիի հոգեւոր հովիվը, հյուպատոս **Աշոտ Մանուկյանը,** ՍԱՀ ՀՀ դեսպան **Արշակ Փոլադյանը,** որը մշտապես ուղեկցում էր պատվիրակությանն ու ջանում էր, որ որեւէ խնդիր կամ խոչընդոտ չլինի:

«Անչափ տպավորված եմ այս համերգով,- ասաց գրող-հրապարակախոս **Թորոս Թորանյանը,**- այսպես՝ մշակույթը կարող է բարեկամություն ստեղծել: Շնորհակալ ենք ու երախտապարտ, որ հայ մշակույթը մեծ տպավորություն թողեց»: Լրագրող **Սալբի Գասպարյանը** շեշտեց. «Նման ելույթները մեզ ուժ են տալիս, ոգեւորում, որպեսզի մեր ազգային նայենք նաեւ արվեստի ճանապարհով... »: ՍԱՀ-ում ՌԴ դեսպան **Ռաշիդ Սադիկովը** շնորհավորելով՝ նշեց. «Ես հիացած եմ ձեր երկրով, ձեր մշակույթով, իսկ այն, ինչ տեսա՝ հրաշալի կատարողական, հրաշալի ձայն, պլաստիկա, մի խոսքով՝ բարձրագույն մշակույթի հետ շփվեցինք եւ կրկին ծանոթացանք հայ մշակույթին: Դուք միայն այս խմբով արդեն ողջ աշխարհին կարող եք ներկայանալ ու դա ձեզ մեծ պատիվ կբերի»:



Ս. ՄԱԿԱՐՅԱՆ
Սիրիա

## Իրանի ֆիլհարմոնիկ երգչախումբը Գյումրիում

### Սկիզբ առած համագործակցությունը կշարունակվի

Մեկ շաբաթ Գյումրիում էին պարսիկ խմբավար, Իրանի ֆիլհարմոնիկ երգչախմբի գեղարվեստական ղեկավար Ալի Ռեզա Շաֆախինեժադը եւ իր ղեկավարած համույթի 34 անդամներ: Այցի վերջին օրը՝ սեպտեմբերի 30-ին երգչախումբը հրաժեշտի համերգով հանդես եկավ Երեւանի պետկոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դահլիճում, իսկ մինչ այդ խմբի ղեկավարը հանդիպեց լրագրողների հետ եւ ներկայացրեց այցի նպատակն ու բովանդակությունը:

Ալի Ռեզա Շաֆախինեժադը այս տարվա ամռանը առաջին անգամ Գյումրի է հրավիրվել որպես երիտասարդ երաժիշտ-կատարողների միջազգային ամենամյա մրցույթ-փառատոնի վոկալի մասնագիտական հանձնախմբի անդամ եւ այստեղ տեսել է երիտասարդ կարող ուժեր, որոնց հետ ցանկացել է աշխատել՝ փորձելով միավորել իր երգչախմբի եւ նրանց ուժերը: Իր ղեկավարած 80-հոգանոց խմբի մի մասին բերելով այստեղ՝ խմբավարն այս օրերին աշխատել է նրանց եւ տեղից ընտրված առայժմ 7-8 ուսանող վոկալիստների հետ, Գյումրուց մեկ օր առաջ համատեղ համերգով հանդես եկել նաեւ մարզի Արթիկ քաղաքում:

Գյումրիում կայացած համերգի առաջին բաժնում Իրանի ֆիլհարմոնիկ երգչախմբի անդամները նախ կատարեցին մեկ հոգեւոր ստեղծագործություն, ապա՝ պարսկական ժողովրդական երգեր... հայ կոմպոզիտորների մշակմամբ: Այդ ստեղծագործություններն ու կատարումները հետաքրքրական էին թե՛ մեր հնամենի հարեւան ժողովրդի մշակութային ինքնատիպության, թե՛, ինչպես մեզ թվաց, նաեւ այդ դարավոր հարեւանությամբ պայմանավորված ինչ-ինչ առնչակցությունների առումով: Գյումրեցի մի քանի ուսանողներով համալրվելուց հետո երգչախումբը նախ բավական անկաշկանդ կատարեց հայկական «Անձրեւն եկավ շաղալեն» խմբերգը, ապա՝ երկրորդ բաժնում, եվրոպական դասական ստեղծագործություններ՝ Մոցարտ, Ֆորե, Հայդն: Դահլիճը ջերմ ծափերով ընդունեց խմբի բոլոր կատարումները:

Նաեւ Երեւանում կարճ ժամանակ աշխատելու առիթ ունեցած պարսիկ խմբավարին գրավել են Գյումրին՝ որպես իրեն «շատ ավելի արտիստիկ» թվացած քաղաք, նրա մարդիկ, եւ նա հույս հայտնեց, որ սկիզբ առած համագործակցությունը կշարունակվի ու կզարգանա: Ցանկություն կա, մասնավորապես, իրանա-հայկական համատեղ երգչախմբով մասնակցելու 2012 թվականին Ուկրաինայում կայանալիք հոգեւոր երաժշտության փառատոնին:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

## Մահացել է հայտնի դերասան Թոնի Քերթիսը

Կյանքի 85-րդ տարում Միացյալ Նահանգներում մահացել է հոլիվուդյան հայտնի դերասան Թոնի Քերթիսը: Entertainment Tonight պարբերականի փոխանցմամբ՝ դերասանի դուստրը Ջեյմի Լի Քերթիսը հաստատել է նրա մահվան մասին տեղեկատվությունը:

Թոնի Քերթիսը ծնվել է 1925 թվականին: Կինոյում իր կարիերան սկսել է 1940-ականներին: 1950-60-ական թվականներին Թոնի Քերթիսն ամերիկյան կինեմատոգրաֆիայի ամենահայտնի դերասաններից էր: Նա նկարահանվել է «Սպարտակ», «Վիկինգներ», «Ջազում միայն աղջիկներն են», «Մաֆիայի թագուհին» եւ այլ ֆիլմերում: «Ջազում միայն աղջիկներն են» ֆիլմում Թոնի Քերթիսը խաղացել է հանրահայտ դերասանուհի Մերլին Մոնրոյի հետ:

Դերասանը 6 երեխաների հայր էր եւ ամուսնացած է եղել 5 անգամ:

Ի. Պ.

# Հայ շախմատիստները վայր դրեցին օլիմպիական չեմպիոնի լիազորությունները



Շախմատի համաշխարհային օլիմպիադայում երեկ կայացավ նախավերջին՝ 10-րդ տուրը: Մրցանակային տեղերին հավակնելու համար Հայաստանի տղամարդկանց հավաքականին չեխերի հետ մրցավեճում միմիայն հաղթանակ էր անհրաժեշտ: Այն ձեռք բերվեց Լեւոն Արոնյանի շնորհիվ, որը սեւերով հաղթեց Դավիթ Նավարային: Մյուս պարտիաներում խաղաղ ելք գրանցվեց: Հաշտություն կնքեցին Վլադիմիր Հակոբյանն ու Վիկտոր Լազնիչկան, Զբինեկ Հրաչեկն ու Գաբրիել Սարգսյանը, Արման Փաշիկյանն ու Վլաստիմիլ Բաբուլան:

Իսկ ահա հայ շախմատիստուհիները, որ մոտեցել էին առաջատարներին, չկարողացան շարունակել հաղթարշավը եւ 1-3 հաշվով զիջեցին լեհերին: 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց Էլինա Դանիելյանը Մոնիկա Սոչկոյի հետ մրցավեճում: Արդեն 29-րդ քայլին հանձնվեց Լիլիթ Գալոյանը՝ սպիտակներով պարտվելով Ջոաննա Մայդան-Գաժեւսկային: Յոլանտա Զավաձկա-Լիլիթ Գալոյան, Ջոաննա Դվորոկովսկա-Նելլի Աղինյան պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Վաղը կայանալիք ավարտական տուրից առաջ չեմպիոնի տիտղոսը նվաճելու ամենալավ հնարավորությունն ունի Ուկրաինայի տղամարդկանց հավաքականը, որը 3,5-0,5 հաշվով հաղթելով ֆրանսիացիներին, 18 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: Ուկրաինացիներից մեկ միավորով է հետ մնում Ռուսաստանի 1-ին հավաքականը, որն առավելության հասավ չինացիների նկատմամբ (2,5-1,5): Ռուսների հաղթանակն ապահովեց Ալեքսանդր Գրիշչուկը՝ պարտության մատնելով Հաո Վանին: 16 միավոր ունի Իսրայելի հավաքականը, որը 3-1 հաշվով հաղթեց ամերիկացիներին: Հայաստանի հավաքականը Ֆրանսիայի, Լեհաստանի, Իսպանիայի եւ Հունգարիայի ընտրանիների հետ վաստակել է 15 միավոր:

Առաջատարների մասնակցությամբ մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. Իսպանիա-Վրաստան՝ 3-1, Սերբիա-Լեհաստան՝ 1-3, Հունգարիա-Բելառուս՝ 3-1, Իտալիա-Ադրբեջան՝ 2-2, Չիլի-Ռուսաստան-2՝ 1-3: 10-րդ տուրից հետո Հայաստանի տղամարդկանց հավաքականը պաշտոնապես վայր դրեց օլիմպիական չեմպիոնի իր լիազորությունները: Մեր շախմատիստները լավագույն դեպքում կարող են հավակնել միայն բրոնզե մեդալների: Դրա համար նրանք անպայման պետք է հաղթեն ավարտական տուրի իրենց մրցակցին՝ Ֆրանսիայի հավաքականին ու սպասեն մյուս կարեւոր մրցախաղերի արդյունքներին:

Ներկայացնենք մեդալների հավակնող թիմերի զույգերը. Իսրայել-Ուկրաինա, Ռուսաստան-1-Իսպանիա, Լեհաստան-Հունգարիա, Ռուսաստան-2-Հունաստան, Չինաստան-Իտալիա, Ադրբեջան-Ռուսաստան-3, Կուբա-ԱՄՆ:

Կանանց մրցաշարում չեմպիոնը պաշտոնապես հայտնի դարձավ: Մրցակցությունից դուրս է Ռուսաստանի 1-ին հավաքականը, որը 4-0 հաշվով ջախջախելով Բուլղարիայի ընտրանուն, վաստակեց 20 միավոր եւ անհասանելի դարձավ մրցակիցների համար: 16 միավորով 2-րդ տեղում Չինաստանի հավաքականն է, որը 3-1 հաշվով հաղթեց հնդիկներին: 15-ական միավոր ունեն Ուկրաինայի, Վրաստանի, Լեհաստանի եւ Ռուսաստանի 2-րդ հավաքականները: Ահա գրանցված արդյունքները. Վրաստան-Ուկրաինա՝ 2-2, Սերբիա-Ռուսաստան-2՝ 1-3, Կուբա-Լատվիա՝ 2,5-1,5, Ադրբեջան-Հունգարիա՝ 3-1, Պերու-ԱՄՆ՝ 0-4, Հունաստան-Ռուսաստան-3՝ 2-2:

Հայաստանի հավաքականն ունի 13 միավոր եւ այլեւս չի կարող հավակնել մեդալի: Մեր հավաքականը վերջին տուրում մրցելու է Սլովենիայի ընտրանու հետ եւ հաղթանակի դեպքում տեղ կզբաղեցնի լավագույն տասնյակում:

Առաջատարների մասնակցությամբ կկայանան հետեւյալ մրցախաղերը. Ռուսաստան-2-Ռուսաստան-1, Չինաստան-Ուկրաինա, Լեհաստան-Վրաստան, Խորվաթիա-Կուբա, ԱՄՆ-Հնդկաստան:

## Ուկրաինական ակումբները ձախողվեցին

**Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի 2-րդ տուրում հաջող հանդես եկան ռուսական թիմերը, իսկ ահա ուկրաինական ակումբները հիասթափեցրին իրենց երկրպագուներին:**

**Կրկին արդյունավետ խաղով աչքի ընկավ «Զենիթը»՝ սեփական հարկի տակ 4-2 հաշվով հաղթելով հունական ԱԵԿ-ին: Մոսկվայի ԲԿՄԱ-ն էլ հյուրընկալվելով չեխական «Սպարտային», 3 անպատասխան գնդակ խփեց մրցակցի դարպասը: Ռուսական երկու թիմերն էլ 6 միավորով գլխավորում են իրենց խմբերի մրցաշարային աղյուսակները:**

**Տուրի գլխավոր անակնկալը գրանցվեց Տիրասպոլում, որտեղ մոլդովական «Շերիֆը» 2-0 հաշվով պարտության մատնեց Կիեւի «Դինամոյին», որը E խմբում 1 միավորով եզրափակում է աղյուսակը: Խաղից հետո «Դինամոյի» գլխավոր մարզիչ Վալերի Գազաեւը հրաժարական տվեց: Խարկովի «Մետալիստն» էլ սեփական հարկի տակ նույնպիսի հաշվով զիջեց հոլանդական «Էյնդհովենին»: «Կարպատների» ֆուտբոլիստներն էլ Փարիզում 2 գնդակ ընդունեցին տեղի ՊՍԺ-ից՝ կրելով 2-րդ անընդմեջ պարտությունը:**



**Մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. «Լեխ»-«Զալցբուրգ»՝ 2-0, «Մանչեսթր Սիթի»-«Յուվենտուս»՝ 1-1, «Ռուսենբորգ»-«Արիս»՝ 2-1, «Ասլետիկո»-«Բայեր»՝ 1-1, «Գենտ»-«Լիլ»՝ 1-1, «Սպորտինգ»-«Լեւսկի»՝ 5-0, ՊԱՕԿ-«Դինամո» Զագրեբ՝ 1-0, «Վիլյառեալ»-«Բրյուգե»՝ 2-1, ԲԱՏԷ-«Ալկմար»՝ 4-1, «Պալերմո»-«Լոզան»՝ 1-0, «Հայդուկ»-«Անդերլեխտ»՝ 1-0, «Օդենսե»-«Շտուտգարտ»՝ 1-2, «Յանգ Բոյզ»-«Խետաֆե»՝ 2-0, «Սամպդորիա»-«Դեբրեցեն»՝ 1-0, «Բորուսիա» Դ.-«Սեւիլիա»՝ 0-1, «Ստյաուա»-«Նապոլի»՝ 3-3, «Ուտրեխտ»-«Լիվերպուլ»՝ 0-0, «Ռապիդ»-«Բեշիքթաշ»՝ 1-2, ԲԿՄԱ Սոֆիա-«Պորտո»՝ 0-1:**

## «Բիլդը» Կլիչկոների եկամուտի մասին

**Գերմանական «Բիլդ» հանդեսը հետաքրքրական տեղեկություններ է հրապարակել Կլիչկո եղբայրների եկամուտների վերաբերյալ: Ըստ հանդեսի, Կլիչկո եղբայրների մենամարտերի կազմակերպումն ու անցկացումն իրականացնում է նրանց պատկանող KMG ֆիրման, ուստի այլեւս հարկ չկա վաստակած գումարի 35 տոկոսը վճարել պրոմոութերական ընկերությանը: Կլիչկո եղբայրներին եւ նրանց 54-ամյա մենեջեր, նախկին լրագրող Բեռնդ Բյոնտեին է պատկանում համբուրգյան այդ ֆիրմայի բաժնետոմսերի մեկ երրորդը:**

**Բացի այդ, Կլիչկո եղբայրները գովազդային պայմանագրեր ունեն McFit ֆիթնես ցանցի, վիտամինային սարքավորումներ արտադրող Eunova ֆիրմայի, Mercedes ավտոգործարանի եւ գերմանական Telekom պետական ընկերության հետ: Բռնցքամարտիկները նաեւ տարբեր երկրներում անշարժ գույքի սեփականատեր են:**

**«Բիլդ» հանդեսի հաշվարկներով, միայն Սեմուել Պիտերի հետ մենամարտից մոտ 7 մլն եվրոյի գումար է ստացվել: Մենամարտի ցուցադրման համար RTL հեռուստաալիքը վճարել է 3 մլն եվրո: 116 երկրներում մենամարտի ցուցադրման իրավունքի վաճառքից ստացվել է մոտ 0,5 մլն, գովազդից՝ 2 մլն, տոմսերի վաճառքից՝ 1 մլն եվրո:**

**Մենամարտի համար Կլիչկո եղբայրները ստանում են 3 մլն եվրո: Մնացած գումարից հոնորար է վճարվում մրցակցին, 150 հազար եվրո վճարվել է մարզադաշտի վարձակալության համար գումարած հարկերը: Դրանց մեծամասնությունը Կլիչկոները վճարում են Գերմանիայում: Հանդեսի հաշվարկներով, ներկայումս Վլադիմիրի հաշվեհամարին 20 մլն եվրո գումար կա, Վիտալիի եկամուտը կազմում է մոտ 15 մլն եվրո՝ հաշվի առնելով ռինգում նրա ելույթների 4-ամյա ընդմիջումը:**

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

## Լյովա Կիրակոսյանը տիտղոսի պաշտպանությունը կիրականացնի

**Այսօր անգլիական Բոլտոն քաղաքում առաջին թեթեւ քաշային կարգի (մինչեւ 59 կգ) Եվրոպայի չեմպիոն Լյովա Կիրակոսյանը տիտղոսի պաշտպանության համար կմենամարտի բրիտանացի բռնցքամարտիկ Սթիվեն Ֆոստերի հետ:**



**36-ամյա Կիրակոսյանը ծնունդով Գյումրիից է, ներկայումս Ռուսաստանի քաղաքացի է եւ բնակվում է ֆրանսիական Թուլոն քաղաքում: Պրոֆեսիոնալ ռինգում նա 38 մենամարտ է անցկացրել, որոնցից 33-ում հաղթել է, 5-ում պարտվել: Նա ժամանակին մոտ էր աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար պայքարելուն, սակայն պարտվեց Սերգեյ Գուլյակեւիչից: Բայց հայ բռնցքամարտիկը չվհատվեց ու դարձավ Եվրոպայի չեմպիոն: Կիրակոսյանին բնորոշ է հարձակողական ոճը: Բրիտանացի բռնցքամարտիկների հետ մենամարտերում նա որպես կանոն հաղթող է դուրս եկել:**

**Ի տարբերություն Կիրակոսյանի, 30-ամյա Ֆոստերը բախտ ունեցել է վիճարկելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Սակայն WBO-ի վարկածով չեմպիոնական գոտու համար մենամարտում Ֆոստերը պարտվել է շոտլանդացի Արթուր Արկտուրին: Այդ մենամարտից հետո նա առանձնակի հաջողությունների չի հասել: Չնայած դրան, Ֆոստերը վտանգավոր մրցակից է, թեեւ վատ է դիմագրավում մրցակցի հարվածներին ու ֆիզիկապես էլ դիմացկուն չէ: Պրոֆեսիոնալ ռինգում Ֆոստերը 30 մենամարտերից հաղթել է 27-ում, մեկն ավարտել է ոչ-ոքի, կրել է 2 պարտություն:**

## Մարտիրոսյանի մրցակիցը Պավել Վոլակն է

**ԱՄՆ-ում բնակվող նախկին աբովյանցի բռնցքամարտիկ Վանես Մարտիրոսյանը հերթական մենամարտը կանցկացնի լեհ Պավել Վոլակի հետ: Մենամարտը կանցկացվի դեկտեմբերի 4-ին կամ 18-ին:**

**Հետաքրքրական է, որ 29-ամյա Վոլակը պրոֆեսիոնալ ռինգում ելույթները համատեղում է շինարարությունում աշխատանքի հետ: Այդ հարցում նրան աջակցում է գործատուն՝ Ադամ Սկարժինսկին:**

**«Ադամը լիովին աջակցում է ինձ: Նա տոմսեր է գնում, շինարարությունում աշխատողների մեծամասնությունն էլ հաճախում են իմ մենամարտերին: Նրանց հետաքրքրական է հետեւել իմ մրցավեճին: Սկարժինսկին մենամարտին նախապատրաստվելու համար ինձ բավական ժամանակ է հատկացնում: Նույնիսկ երբ ես աշխատում եմ, շաբաթական 5 անգամ մարզվում եմ», նշել է Պավել Վոլակը: Նա պրոֆեսիոնալ ռինգում 28 մենամարտերից միայն մեկում է պարտվել: Իսկ ահա 24-ամյա Վանես Մարտիրոսյանը պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է՝ շահելով բոլոր 28 մենամարտերը:**

## «Կիլիկիան» տուգանվեց 250 հազար դրամով

**Կայացավ ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը: Առաջնության 22-րդ տուրում Կապանում «Գանձասարի» հետ խաղին չներկայանալու համար «Կիլիկիային» տեխնիկական պարտություն է գրանցվել, իսկ ակումբը տուգանվել է 250 հազար դրամով:**

**Հաշվի առնելով ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի միջնորդությունը, կարգապահական կոմիտեն «Միկայի» պաշտպան Հրայր Մկոյանի որակազրկումը 2 խաղից դարձրել է 1 խաղ: Այնպես որ Մկոյանը հնարավորություն կունենա մասնակցելու այսօր կայանալիք «Միկա»-«Փյունիկ» հանդիպմանը:**

## Կերժակովի խաղակոշիկները վաճառվեցին

**Ինչպես տեղեկացրել էինք, «Զենիթի» հարձակվող Ալեքսանդր Կերժակովն իր խաղակոշիկներն աճուրդի էր հանել: Դրանք աճուրդում վաճառվել են 25,1 հազար ռուբլով: Բարեգործական աճուրդում վաճառված բոլոր իրերից ստացված գումարը կփոխանցվի հիվանդ երեխաների օգնության հիմնադրամին:**

## Ամենապահանջվածը «Ռեալի» եւ «Մանչեսթր Յունայթեդի» մարզահագուստն է

**Աշխարհում ամենալավ վաճառվողը Մադրիդի «Ռեալի» եւ «Մանչեսթր Յունայթեդի» մարզահագուստն է: Նման եզրակացության են հանգել գերմանական PR Marketing ընկերության փորձագետները: Ըստ նրանց, տարեկան վաճառվում է Եվրոպայի առաջատար երկու ակումբների 1,2-1,5 մլն մարզահագուստ:**

**Այս յուրօրինակ մրցավազքում ակնհայտ է անգլիական ակումբների առավելությունը: «Արսենալը», «Լիվերպուլն» ու «Չելսին» տարեկան 700-900 հազար մարզաշապիկ են վաճառում: Մյուս երկրների առաջատար ակումբներից նշված եռյակի հետ կարող է մրցակցել միայն Մյունխենի «Բավարիան»: «Յուվենտուսի», «Ինտերի» եւ «Միլանի» մարզաշապիկները տարեկան գնում են 400-600 հազար ֆուտբոլասերներ:**

---

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառք՝

Բնակարան: Ընդհանուր մակերեսը 49 քմ: Հասցե: ՀՀ, ք. Երեւան, Թումանյան փող., 15 շենք, թիվ 10 : Մեկն. գինը՝ 38640000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում, 02.11.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

# «Արեւաբերդում» կինոարեւ էր

## *«Ոսկե Ծիրանը» Բերդում*

Եթե դեռ վերջերս հեռավոր Տավուշի մարզի Բերդ քաղաքի բնակիչներին ասեին, թե շուտով իրենց բնակավայրում կկայանա «Ոսկե ծիրան» կինոփառատոնը, ապա նրանք դա ցնորք կհամարեին. որտե՞ղ հայ կինոյի սերուցքը, որտե՞ղ կորած-մոլորված իրենց քաղաքը, որի միակ կինոթատրոնը արդեն երկու տասնամյակ հետեւողականորեն իր մահկանացուն է կնքում:

Սակայն, պարզվում է, իրական կյանքում էլ են հրաշքներ պատահում, եւ դրանցից մեկի հեղինակը կինոարվեստի մեծ երկրպագու, մասնագիտությամբ կինոռեժիսոր **Վիկտոր Հայրապետյանն** էր, որը կյանքի կոչեց ավերակվող կառույցը՝ հիմնանորոգեց, արդիականացրեց, շքեղացրեց, տեխնիկապես վերազինեց իր ծննդավայրի «Արեւաբերդ» կինոթատրոնը՝ վերածելով... արբանյակային հեռուստակինոթատրոնի: Ամպագոռգո՞ռ է հնչում: Բնավ: Շինության վրա տեղակայված երկու հզոր հեռուստաափսեները երկու սրահների կինոէկրաններին ապահովում են հարյուրից ավելի ալիքներ բոլոր համաշխարհային քաղաքներից: Բերդցիներն արդեն սրամտում են, թե նույնիսկ սպասասրահի նորաբաց սրճարանի լայնէկրան հեռուստացույցից... տիեզերքի հոտն են առնում:



Նոր Վարագավանքում հյուրերին դիմավորում են Տերունական աղոթքով

Սակայն տեխնիկական լիրիկայից անցնենք հաճելի իրողություններին: Ասել, թե բերդցիները կարոտել էին նման իրադարձություն, նշանակում է ոչինչ չասել: Նրանք նույնիսկ հուզվեցին, երբ իմացան, որ հենց Բերդում կինոփառատոն անցկացնելու գաղափարը պատկանում է երկրի բարձրագույն պետական այրերից մեկին՝ վարչապետին: Հայ կինոյի ներկայացուցիչներին՝ ռեժիսորներ, դերասաններ, կինոքննադատներ եւ այլք, բերդցիները քաղաքապետ Անդրանիկ Շառյանի եւ Բերդի ու տարածաշրջանի հոգեւոր հովիվ տեր Արամ քահանա Միրզոյանի առաջնորդությամբ դիմավորեցին 13-րդ դարի ճարտարապետական կոթող Նոր Վարագավանքում: Հոգեւոր եւ կենարար լիցք ստանալով՝ հյուրերն այնուհետեւ բերկրանք ապրեցին, երբ տեսան իրենց սպասող հիրավի լեփ-լեցուն կինոսրահը: «Ոսկե ծիրանն» առաջին անգամն էր անցկացվում ծայրամասային վայրում: Պաշտոնական բացումն էլ առավել քան մտերմիկ էր, հատկապես երբ ուղեկցվեց աստվածամերձությամբ խորհրդայնացված նախկին չամչադինցիների համար «աննախադեպ», բայց արդեն, փառք Աստծո, սովորական դարձող «Հայր մերով»:

Ահա եւ Հայ եկեղեցու ներկայացուցչի պատվին փառատոնի ծրագրով առաջինը ցուցադրվեց ամերիկացի կինոռեժիսոր Ալբերտ եւ Ալեն Հյուզ եղբայրների «Եղիայի գիրքը» ֆիլմը: Հզոր է գերժամանակակից կինոտեխնոլոգիաներով նկարահանված ժապավենի կենսափիլիսոփայությունը՝ Երրորդ աշխարհամարտից հետո մարդ արարածին կփրկի աստվածաշնչային հավատքը: Շահեկան էր, որ ֆիլմերի ցուցադրումներից առաջ կինեմատոգրաֆիստները մատչելի լեզվով պատմում էին տվյալ ստեղծագործության եւ նրա հեղինակների մասին: Բերդցիներն, օրինակ, իմացան, որ ռեժիսորներ Հյուզ եղբայրների մայրը հայ է, հայրը՝ նեգր, եւ երբ նրանցից մեկը՝ Ալենը, այցելել է Երեւան, ապշել է, որ ամենուր խոսում են... իր մոր լեզվով: Երկու «գունամորթ» հայերի մեջ գաղափար է հղացել ֆիլմ նկարահանել Հայաստանում, եւ բերդցիները փափագ հայտնեցին, որ գոնե որոշ դրվագներ կնկարահանվեն իրենց հայրենի լեռնաշխարհում: Իսկ ահա մյուս՝ «Վենեսիա» ֆիլմի ռեժիսոր Հայկ Ղազարյանին իրավամբ վենեսուելահայ կարելի է համարել:



Զրուցում են Վիկտոր Հայրապետյանը եւ Սուրեն Բաբայանը:

Անշուշտ, տեղացիների համար համեմատաբար հեշտ էր մարսել հայաստանցի ռեժիսորների գործերը, թեեւ դրանք էլ մի-մի փիլիսոփայական կինոտրակտատներ են: Արդյոք հե՞շտ է ընկալել մարդու ինքնաճանաչման հավերժական խնդիրը, որի որոնումը հոյակապ է արտացոլված Սուրեն Բաբայանի «Մի նայիր հայելուն» ֆիլմում: Նույնքան իմաստնալից են Հ. Խաչատրյանի «Սահման» եւ Է. Բաղդասարյանի «Սուրբ ծեսերի երկիրը» ժապավենները: Իսկ Ա. Մանարյանի «Սասունցի Դավիթը» թերեւս ավելի մեծ հաճույքով դիտեցին մեծերը:

- Մենք շնորհակալ ենք Վիկտոր Հայրապետյանին կինոմշակույթին ակտիվորեն առնչվելու ընձեռած հնարավորության համար, -ասում է բժիշկ **Դավիթ Հարությունյանը**: - Շատ կուզեինք, որ «Արեւաբերդում» կազմակերպվեին նաեւ կարգին համերգներ, դրա հնարավորությունը կա: Թե չէ մեռանք ռաբիս լսելով:



Կինեմատոգրաֆիստ հյուրերին դուր եկան Բերդը, նրա բնակիչները, բնությունը, եւ իհարկե «Արեւաբերդը»: Համենայն դեպս «Ոսկե ծիրան» փառատոնի ծրագրերի տնօրեն **Միքայել Ստամբոլցյանը** խոստացավ այդ միջոցառումը դարձնել ամենամյա:

Չի զղջա:

**ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ**

---

**ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ**

### Հոկտեմբերի 4-ից 10-ի միջոցառումների ծրագիր

**Հոկտեմբերի 4, երկուշաբթի**

«Ճանաչիր ինքդ քեզ»՝ հայագիտական թեմաներով սեմինարներ

Մասնակցում են պատմաբաններ Արտակ Մովսիսյանը, Ավետիս Հարությունյանը, գեղանկարիչ Գոռ Աբրահամյանը, ազգագրագետ, պարուսույց Գագիկ Գինոսյանը, գրող, հրապարակախոս Արծրուն Պեպանյանը, կոմիտասագետ Արթուր Շահնազարյանը և ուրիշներ:

Ժ. 15:00. Թեմա՝ «Երիտասարդության դերը պատմամշակութային արժեքների պահպանման ու զարգացման գործում»

Հոկտեմբերի 4-ին զրույցը կվարի Արծրուն Պեպանյանը

**Հոկտեմբերի 5, երեքշաբթի**

Ժ. 14:00 Գրքի շնորհանդես՝ «Մտապնակ», հեղինակ՝ Արուսյակ Օհանյան

Ժ. 17:00 Դանիել Դեքերի «Հայ եմ՝ իմ ընտրությամբ» ձայնասկավառակի շնորհանդես

**Հոկտեմբերի 6, չորեքշաբթի**

Ժ. 14:00 Ցուցահանդես /գրաֆիկա/. ներկայանում են Արևիկ Գրիգորյանը և Ալիս Մազոյանը: Ցուցահանդեսը կտևի մինչև հոկտեմբերի 16-ը:

Հոկտեմբերի 7, հինգշաբթի

Գրական- երաժշտական երեկո՝ նվիրված Թարգմանչաց տոնին:

---

### Ցավակցություն

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը խորապես ցավակցում է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» կազմակերպության հայաստանյան գրասենյակի ղեկավար

**Ամալյա Կոստանյանի**

հարազատներին ու մերձավորներին՝ վերջինիս անժամանակ մահվան կապակցությամբ:

Կորստի այս ծանր պահին ընդունեք մեր անկեղծ ցավակցությունն ու զորակցությունը:

*Հարգանքով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն*

«**Ազգը**» միանում է ցավակցություններին:

### Ցավակցություն

Խոր վշտով տեղեկացանք **Ամալյա Կոստանյանի՝** «Թրանսփերենսի ինտերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի տնօրենի անժամանակ մահվան մասին: Համագործակցության երկար տարիների ընթացքում մենք բարձր ենք գնահատել Ամալյային՝ իր ազնվության, մասնագիտական պատրաստվածության եւ սեփական գործին նվիրվածության համար: Նրա բացակայությունը մեծ կորուստ է Հայաստանի համար, որն ունի նման խիզախ եւ անկեղծ մարդկանց կարիք: Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում Ամալյայի ընտանիքի անդամներին եւ գործընկերներին:

*ԵԱՀԿ երեւանյան գրասենյակ*

www.accea.info
ՆՈՐԱՐԱՐ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԸ
Ներկայացնում է
սեպտեմբեր 2 - հոկտեմբեր 30, 2010
ԲԱԶՄԱՇԵՐՏ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ
21 արվեստագետների խմբական ցուցահանդես համադրությամբ
ՍՈՆԻԱ ՊԱԼԱՍԱՆՅԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԸ
Ներկայացված երիտասարդ, խոստումնալից արվեստագետների աշխատանքներով
նկարչություն
ինստալացիա
լուսանկարչություն
վիդեո-արվեստ-ինստալացիա
ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է
Այցելություն ամեն օր բացի կիրակի եւ երկուշաբթի, ժամը 11:00-17:00
Փավստոս Բյուզանդի 1/3 (Վերնիսաժի հարավ) հեռ. 568225

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Բնակարան: Ընդհանուր մակ. 91.4 քմ: Հասցե: ՀՀ, ք. Երեւան, Բաշինջաղյան 20շ., բն. 25:: Մեկն. գինը՝ 20000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 25.10.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 1.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: